

Խ. Ա. Հ. Մ. ՀՈՂՋՈՂԿՈՄԱՏ

ՀՐԱՀԱՆՔ

ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ
ՄՐԻԿԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԽՈԶ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ, Ա. Ե.

1 9 3 8

632
Հ-99

04 AUG 2010

632
Հ-99

ԽՍՀՄ ՀՈՂՔՈՂԿՈՄԱՅ

այ.

ՀՐԱՀԱՆԳ
ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՄՐԻԿԻ
ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռուսեկից բարդմանեց և Աղաչանյան

ՀԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵԵՐԵՎԱՆ

1938

17.06.2013

17726

Հաստառում եմ
ԽՍՀՄ-ի ՀԺԿ-ի Գլավզեռնոյի
Աղքոտեխնիկայի բաժնի վարիչ
Սավելյան
4 հունվարի 1988 թ.

ՀՐԱՀԱՆԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՄՐԿԿԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Ժողկոմիսորհի 1937 թ. հունիսի 29 ի «Հա-
ցահատիկային կուլտուրաների սերմացուների լա-
վացման միջոցների մասին» վորոշումը հողային որ-
գաններից պահանջում ե վճռականորեն բարելավել
աղքոտեխնիկական միջոցառումների դրվածքը։ Աղքո-
տեխնիկական խիստ կարևոր միջոցառումներից մեկն
ել մրիկի գեմ պայքարելն ե։

Քանի վոր մրիկի վարակը տարածվում է գլխա-
վորապես սերմացույի միջոցով, ապա հակամրիկային
բոլոր միջոցառումների հիմնական խնդիրը պետք ե
լինի մրիկից առողջ սերմֆոնտի ստեղծումը։

Մրիկից առաջացած կորուսը վերացնելու համար
բոլոր կոլտնտեսություններում բարձրորակ ախտա-
հանումից բացի՝ պետք ե կիրառվեն հատուկ կազմա-
կերպչական տնտեսական միջոցառումներ՝ կապված
տնտեսության մեջ ընդունված աղքոտեխնիկայի հետ։



ՄՐԻԿԻ ԴԵՄ ԿՈԼԾՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԱՅՔԱ-
ՐԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Մրիկի դեմ կոլտնտեսությունները պայքարում են իրենց ուժերով ու միջոցներով ԽՍՀՄ ՀԺԿ-ի այդ խնդրին վերաբերող հրահանգի համաձայն, կոլտընտեսությանը կցված ագրոնոմի զեկավարությամբ։ Մրիկի դեմ պայքարը հաջող կազմակերպելու համաշյուրաքանչյուր կոլտնտեսությանն անհրաժեշտ է՝

ա) առանձնացնել գյուղատնտեսական կուլտուրաների վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարելու համար մշտական կազմակերպիչ և մշտական ողակ ստուգված կոլտնտեսականներից, նախապատրաստելով նրանց հակամրիկային աշխատանքների (սերմացույի ախտահանում, ցանքսերի հետագոտություն, գյուղատնտեսական մեքենաների, պարկերի դեղինֆեկցիա և այլն)։

բ) կատարել հացահատիկային կուլտուրաների ցանքերի հետազոտություն, պարզելու համար նրանց վարակվածությունը մրիկով և այդ հետազոտության արդյունքների հիման վրա կազմակերպել չվարակված հողամասերի բերքահավաքը, դեղավորումը, կալսումն ու բերքի պահպանումը վարակված հողամասերի բերքից բոլորովին առանձին։

գ) բերքահավաքից առաջ մրիկի սպորներից ազատվելու նպատակով խնամքով ախտահանել սերմացույի պահպանման պահեստներն ու շենքերը, պարկերը, բրեգենտները, բերքահավաքի ու սերմազումն մեքենաները և բոլոր այն գործիքները, վորոնք չփում ունեն հացահատիկի հետ։

դ) սերմֆոնտի առանձնացման ժամանակ մրիկով չվարակված սերմնարաններից ստացված սերմացուն պահել առանձին տեղ, նույնպես առանձին պահել ստացված սերմերն ըստ վարակվածության առանձին խմբերի, սույն հրահանգի «Բերքահավաքի կազմա-

կերպումը, կալսումը և սերմացույի պահպանումը» հատվածում ցույց տրված նորմաների համաձայն։

յե) նախքան սերմացույի ախտահանելը, զտել նրան քարամրիկի պարկերից, սեպասունկի յեղթիկներից և ուրիշ կեղտոտ խառնուրդներից։

զ) 100 տոկոսով և խնամքով կատարել դարնանացան և աշնանացան կուլտուրաների (ցորեն, գարի, հաճար, վարսաղի, կորեկ, տարեկան) բոլոր սերմերի ախտահանումը, կատարելով սույն հրահանգի բոլոր կանոնները։

ե) տերմիկ ախտահանման յենթարկել սերմնաբուծական կոլտնտեսություններում և կոլտնտեսությունների սերմաղաշտերում ցանվելիք, փոշեմրիկով վարակված ցորենի և գարու սերմացում։

ը) լրիվ հաշվի առնել տնտեսությունում գտնվող բոլոր ախտահանիչ նյութերի քանակը, ստուգել նրանց վորակը և ժամանակին ապահովել նրանց պակասորդի լրացումը Սելիսովոնարի պահեստներից։

թ) հաշվի առնել տնտեսությունում գտնվող ախտահանիչ մեքենաների քանակը և ժամանակին ապահովել նրանց վերանորոգումը։

ժ) ախտահանիչ մեքենաների պակասության դեպքում միջոցներ ձեռք առնել ժամանակին նրանց ձեռք բերելու Սելիսովոնարի պահեստից, կամ թե չե տակառներ պատրաստել և նրանց ախտահանման աշխատանքներին հարմարեցնել։ Միջոցներ ձեռք առնել նաև տերմիկ ախտահանման սարքավորումներ պատրաստելու համար։

ի) ախտահանված սերմացույի յուրաքանչյուր վորոշ քանակի (պարտիայի) համար կազմել համապատասխան ակտ։

լ) ախտահանման աշխատանքների վորակի գնահատումը կատարել ցանքսերում մրիկի առկայության հաշվառումից հետո ապարագի առկայության և հետազոտության նյութերի հիման վրա։

իս) ախտահանման աշխատանքների ընթացքի և
ախտահանված սերմացույի քանակի մասին սահման-
ված ժամկետներին տեղեկություններ ներկայացնել
ՄՏ կայանին և Հողբաժնին Հողժողկոմատի սահմա-
նած ձևերով:

ՍԵՐՄԱՑՈՒՅԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՅԻԸ

Ախտահանման յենթակա յեն ցանվելիք ցորենի,
տարեկանի, հաճարի, գարու, վարսակի, կորեկի բո-
լոր սերմացուները:

Կոլտնտեսության սերմացույի ախտահանման
պլանը կազմում են դաշտավարական բրիգադների
բրիգադիրները և հաստատվում ե կոլտնտեսության
կողմից: Պլանում նախատեսվում ե ախտահանվելիք
սերմացույի քանակը, ախտահանիչ նյութերի, ախ-
տահանիչ մեքենաների, աշխատող ուժի պահպանը,
ինչպես և ախտահանման աշխատանքների կատարման
ժամկետները և արտադրական նորմաները:

Ախտահանումից առաջ սերմացուն պետք է ինամ-
քով զոված լինի:

Ախտահանման թույլատրվում են կոնդիցիոն վի-
ճակի հասցրած սերմացուն, համաձայն հացահատիկա-
յին կուլտուրաների և ընդեղենների սերմացուների
ժամանակավոր ցանքային ստանդարտի, հաստատված
ԽՄՀՄ ժողկոմիորչի կողմից 1938 թվի հունվարի
3-ին:

Կոլտնտեսությունում կատարվելիք ախտահանման
աշխատանքների տեղը ընտրում ե դաշտավարական
բրիգադի բրիգադիրը՝ կոլտնտեսության գյուղատըն-
տեսական կուլտուրաների վնասատուների դեմ պայ-
քարի կազմակերպչի հետ միասին:

Սերմացվի ամեն մի քանակություն (պարտիա)
ախտահանելուց կազմվում ե հատուկ ակտ՝ հետևյալ
ձևով:

Ա Կ Տ

ՍԵՐՄԱՑՈՒՅԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

« 193 թ. ախտահանված ե -
. սերմացու ցենտրներ

(կուլտուրայի անունը)

քանակությամբ:

Ախտահանումը կատարվել ե
(ախտահանիչ նյութի անունը)

. գողիրովվկան ըստ վորում
Ծախսված ե կիլո:

Ախտահանումը կատարվել ե մեքենայով:

Կոլտնտեսության նախագահ՝ (ստրագրություն)
Գյուղատնտես՝ (ստրագրություն)

Ակտը կազմվում է 2 որինակից, վորից մեկը մնում
և Հողբաժնին կամ կոլտնտեսությանն սպասարկող
ՄՏ կայանին:

Կոլտնտեսության սերմացույի ախտահանման հա-
մար պատասխանատու յե կոլտնտեսության նախա-
գահը:

ՍԵՐՄԱՑՈՒՅԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԶԵՎԵՐԸ

Սերմացույի ախտահանումը կատարվում է քիմիա-
կան (չոր, թաց, կիսաչոր) և տերմիկ ձևերով:

Սերմացույի ախտահանման այս կամ այն ձևի
գործադրումը կախված է մրիկի տեսակից և կուլտու-
րայից:

Ցորենի քարամրիկով, վարսակի մրիկով, գարու
քարամրիկով, կորեկի մրիկով սերմերը վարակվում
են կալսման ժամանակ, յերբ վնասված հասկերը,
մրիկի պարկերը և զնդիկները փշրվում են և սպորները
կպչում են առողջ հատիկների մակերեսին:

Մըիկի այս տեսակներով սերմացույի վարակումը տեղի յե ունենում բացի այդ նաև վարակված կալմիչներով, տեսակավորող մեքենաներով, շարքացաներով աշխատելուց, յերբ մեքենայի մասերում գտնվող մրիկի սպորները կպչում են առողջ հատիկների մակերեսին, սերմացուն մեքենայով անցնելու ժամանակ: Հատիկների վարակումը կարող է տեղի ունենալ նաև նրան վարակված պարկերում կամ վարակված պահանջներում, շտեմարաններում պահելու ժամանակ: Մըիկի այս տեսակներով սերմացույի վարակման դեպքում մրիկի սպորները գտնվում են հատիկի մակերեսի վրա, այդ իսկ պատճառով սերմացուն վարակագերծ անելու համար կիրառում են քիմիական ախտահանումը:

Յորենի և գարու հատիկները փոշեմբիկով վարակվում են միմիայն այդ կուլտուրանների ծաղկման ժամանակ: Այս դեպքում վարակող սաղմը ($\delta\text{ից}\text{ելիումը}$) մտնում է հատիկի ներսը և դրա համար ել քիմիական՝ արտաքին ախտահանումն այդ տեսակի մրիկների դեմ մղվող պայքարում արդյունք չի տալիս: Նրանց դեմ կիրառվում է տերմիկ ախտահանումը:

ՔԻՄԻԱԿԱՆ ԱԽՏԱՀԱՆՈՒՄ

ՉՈՐ ԱԽՏԱՀԱՆՈՒՄ

Զոր ձեռվ ախտահանելիս սերմացուն փոշոտում են փոշիանման պրեպարատներով (թույներով): Այս ձեռվ ախտահանում են՝ ցորենը—քարամրիկի և տարեկանը (աշորա)՝ քարամրիկի ու ցողունային մրիկի դեմ:

Յորենի ցողունային մրիկի դեմ միջոցառումները կիրառվում են ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի Կարանտինային սեկտորի հատուկ հրահանդի համաձայն:

Գարին և վարսակը չոր ձեռվ չի կարելի ախտահանել, վորովհետև չոր ախտահանիչները չեն վոչնչացնում հատիկների թեփուկների տակ գտնվող մրիկի սաղմերին:

Սերմացույի դտումը չոր ախտահանումից հետո չի թույլատրվում:

Զոր ախտահանման համար գործ են ածում ԱԲ Է պրոտարս (ՊԴ) պրեպարատները: Սելեկցիոն կայաններում, սերմացուծական կոլտնտեսություններում և կոլտնտեսությունների սերմագաշտերում ցանվելիք ցորենի և տարեկանի սերմացուներն ախտահանվում են ԱԲ-ով (15-16 տոկոս ակտիվ ազդող պղնձի պարունակությամբ), վերցնելով 3 կգ. մեկ տոնն յարովիզացիայի չենթարկվող և 2 կգ. մեկ տոննին յարովիիզացիայի յենթարկվող սերմացույի համար: Պրոտարսը (ՊԴ) (9-11 տոկոս մկնդեղային անհիդրիտի պարունակությամբ) գործ են ածում միայն այն սերմացուների ախտահանման համար, վորոնք յարովիզացիայի չեն յենթարկվում՝ մեկ տոննին մեկ կիլոգրամի հաշվով:

Յորենի և տարեկանի մնացած սերմացույի համար գործ են ածվում հետեւյալ դոզիրովիկաները՝ մեկ տոնն սերմացույին 2 կգ. ԱԲ կամ 0,75 պրոտարս:

20 տոկոս ակտիվ ազդող պղնձինձ պարունակող ԱԲ պրեպարատ ոգտագործվում է՝ վերցնելով 1,5 կգ. մեկ տոնն սերմացույին:

ԱԲ պրեպարատի խոնավությունը պետք է լինի 3 տոկոսից վոչ ավելի, իսկ պրոտարսինը՝ մեկ տոկոսից վոչ ավելի:

ԱԲ պրեպարատով սերմացուն կարելի յե ախտահանել ցանքից շատ առաջ (մինչև 6 ամիս), իսկ պրոտարատվ (Դավիդովի փոշի) վոչ շուտ քան ցանքից մեկ ամիս առաջ:

Զոր ախտահանումը կատարվում է անսպայման բաց ողում, բնակելի շենքերից հեռու, անձրևային յեղանակների ժամանակ՝ ծածկի տակ: Քամիների դեպքում ախտահանումն այնպես է կատարվում, վորպեսզի թույնի փոշին քամին չտանի դեպի բնակելի տները, գոմերը և արոտատեղերը:

Զոր ախտահանումը կատարվում է ԱԲ-2, «Իդեալ»,

«Ուրոժայ» մեքենաներով, իսկ նրանց բացակայության դեպքում հատկապես դրա համար հարմարեցված տակառներով։ (Տես նկ. 1 և 2)։

Ախտահանման աշխատանքներից մեկ ամիս առաջ մեքենաները և տակառները ստուգվում են, վերանորոգվում և վերանորոգումն ավարտելուց հետո աշխատեցնելով նրանց ստուգում։ Բոլոր նկատված թերություններն անմիջապես վերացվում են և ակտերով ձևակերպվում մեքենաների պատրաստականությունն աշխատանքի համար։

Մեքենաներով կամ հարմարեցված տակառներով ախտահանելիս, համաձայն նրանց տարողության, առմեն անդամ լցնելուց առաջ, կշռում են սերմացումն և թույնը։ Մերմացուն կշռում են տասնորդական կշիռներով, իսկ ախտանյութը տեխնիկական ու նժարավոր կշիռներով։ Կշռած սերմացուն լցնում են մեքենայի մեջ յերկու բաժնով։ Նախ լցնում են կշռած սերմացույի կեսը, նրա մակերեսի վրա հավասարաչափ շաղ տալիս կշռած ախտանյութի կեսը, հետո լցնում են հատիկի մյուս կեսը և նորից նույն ձեռվ մարկերեսի վրա հավասարաչափ շաղ տալիս ախտանյութի յերկրորդ կեսը։ Դրանից հետո կափարիչով մեքենայի բարաբանը կամ տակառի բերանը ամուր կերպով փակում են ու պտտեցնելով մեքենայի կամ տակառի բռնակը, խնամքով խառնում են սերմացուն։

Չոր յեղանակով ախտահանված սերմացուն շարքացանի ցանող ապարատի (մասերի) միջով դժվար է անցնում, դրա համար ցանելուց առաջ շարքացանը պետք է այնպես կարգավորել, վորպեսզի նա տա ախտահանված սերմացույի ցանքսի լրիվ նորմա։

Բացի դրանից, չոր ախտահանման ժամանակ շարքացանի կոճը (կատուշկան) փոշտավում է, վորի պատճառով դժվար է պտտվում։ Այս թերությունը վերացնելու համար անհրաժեշտ է ամեն որ ցանելուց առաջ խնամքով մաքրել կոճերը։

ԹԱՅ ԱԽՏԱՀԱՆՈՒՄ

Ֆորմալինով թաց ախտահանումը կիրառվում է վարսակի փոշեմրիկի և քարամրիկի, ցորենի քարամրիկի, գարու քարամրիկի և կորեկի փոշեմրիկի դեմ։

Թաց ձեռվ առաջին հերթին ախտահանվում է ցարենի այն սերմացուն, վորը ցանվելու յե կոլտնտեսության սերմաղաշում և սերմնաբուծական կոլտնտեսությունում։

Թաց ախտահանման համար ոգտագործում են ֆորմալինի հետեւյալ կերպ պատրաստած լուծույթը։ մեկ մաս 40 տոկոսանոց ֆորմալինին ավելացնում են 300 մաս ջուր կամ մեկ մաս 30 տոկոսանոց ֆորմալինին ավելացնում են 225 մաս ջուր։ Լուծույթը պատրաստում են հենց նույն որը, ախտահանումից առաջ։ Մերմացուն նախ թրջում են ֆորմալինի լուծույթով, հետո թողնում ծածկված կույտերով և ապա չորացնում։

Մերմացուն ֆորմալինի լուծույթով թրջելու համար ոգտագործում են հատուկ մեքենաներ՝ ԱԲ-2, «Եքստրա»—«Գեյլա» Պոպովի մեքենան, իսկ վորտեղ մեքենաներ չկան, թրջում են տակառների մեջ կտմ կույտերով։

Կույտերի միջոցով սերմերի թրջումը կատարվում է հետեւյալ կերպ՝ սերմացուն թափում են 30 սանտիմետր հաստության յերկարավուն կույտի ձեռվ ու նրան ցնցուղով (լեյկա) կամ սրսկիչ մեքենայի միջոցով թրջում ֆորմալինի լուծույթով, հետո նրան այնքան են թիակով խառնում, վորպեսզի լրիվ թրջվի։ Այս ձեռվ սերմացուն թրջելու համար նրան լցնում են տախտակյա հատակի կամ բրեզենտի վրա, նախորդ հատակը կամ բրեզենտը խնամքով սրբելով և նույն ֆորմալինի լուծույթով թրջելով։ Մերկ հողի վրա սերմացուն թափելն արգելվում է, վորովհետեւ նա

կեղտոտվում ե և կարող ե նորից յենթարկվել վարսկման*):

Սերմացույի թրջումը տակառների մեջ կատարվում է քթոցների ոգնությամբ (այլի լավ ե ներսից նոսր գործվածք ունեցող կտորով աստառած քթոցների՝ քաղալակների ոգնությամբ): Սերմացուն լցնում են քթոցների մեջ, նրանց տարողության $\frac{3}{4}$ չափով ընկղմում Փորմալինի լուծույթով լցված տակառի մեջ, և անընդհատ խառնում թիակով կամ փայտով: Լուծույթի յերեսը դուրս յեկող աղբը և մրիկի պարկերն անպայման հեռացվում են, վորից հետո հանում են քթոցը, զնում տակառի բերանի վրա, վորպեսզի լուծույթը քամվի, հետո տամկացման համար կույտով թափում են տախտակյա հատակի կամ բրեզենտի վրա: Յորենի սերմացուն ալելի լավ ե ախտահանել ընկղմելու միջոցով:

Սերմացուն մեքենայով, տակառների մեջ կամ կույտերով թրջելու համար անպայման 2 ժամ տամկացման են յենթարկում, վորովհետև միմիայն տամկացման ժամանակ ե, վոր Փորմալինի գոլորշիները վոչնչացնում են մրիկի սաղմերին (սպորներին):

Տախտակյա հատակը, բրեզենտը, վորոնց վրա թափում են սերմացուն, ինչպես նաև այն բրեզենտներն ու պարկերը, վորոնցով տամկացման ժամանակ ծածկում են սերմացուն, անպայման պետք ե թրջել 1:300-ի հարաբերությամբ 40 տոկոսանոց կամ 1:225-ի հարաբերությամբ 30 տոկոսանոց Փորմալինի լուծույթով:

2 ժամ տամկացման յենթարկելուց հետո սերմացուն բարակ շերտով թափում են մաքուր, ախտահանված հատակի վրա, ծածկի տակ, անպայման ստվերում, և քամու հոսանքի տակ չորացնելով հասցնում նորմալ խոնավության: Չորացման ժամանակ անհրաժեշտ ե սերմացուն ժամանակ առ ժամանակ թիակնե-

*) Այս ձևով ախտահանումը կատարելու յերբ անհետությունը չունի տակտոներ և անպայման տախտակյա կամ ցեմենտի հատակ ունեցող շենքերում

րով խառնել: Ախտահանված սերմացուն արգելվում է արևի տակ չորացնել, վորովհետև դրանից նա կորցնում է իր ծլունակությունը:

Վոչ լրիվ չորացրած սերմացուն կարելի յե ցանել միմիայն խոնավ հողում: Չոր հողերում այդ սերմացուն արգելվում է ցանել, վորովհետև այդ դեպքում սերմերի ծլունակությունն ընկնում է: Նման դեպքում սերմացուն պետք է հասցնել նորմալ խոնավության:

Այս ձեռվ ախտահանված հատիկների ծավալը մեծանում է, ուստի շարքացանի անցքերը պետք ե մեծացնել, վորպեսզի նա լրիվ կատարի ցանքի նորման ախտահանված սերմացույթով: Թաց ախտահանումը կատարում են ցանքից 2-3 որ, ամենաշատը 5 որ առաջ: Մեկ տոնն սերմացու ախտահանելու համար պահանջվում է 100 լիտր Փորմալինի լուծույթ, այսինքն մեկ կգ-40 տոկոսանոց Փորմալինով կարելի յե ախտահանել 30 ցենտներ, կամ մեկ կլ 30 տոկոսանոց Փորմալինով 22,6 ցենտներ սերմացու:

Ֆորմալինը պետք ե թափանցիկ (պարզ) լինի, յեթե Փորմալինը նստվածք ունի, պետք ե Փորմալինով լի անոթը դնելով տաք ջրի մեջ, նրա նստվածքը լուծել: Յեթե գրանից հետո նորից նստվածք մնա, այդ գեղքում նրան կարելի յե լուծել հետևյալ կերպ՝ վերցնել Փորմալինի չափ տաք ջուր, յուրաքանչյուր 1 լիտրին 8 գր. լիտացքի կամ 4 գրամ կառուստիկ սողա ու լուծել այն ջրի մեջ. խմելու սողան արգելվում է ողտագործել: Ստացված լուծույթը լցնել Փորմալինի մեջ և խառնել, վորից հետո թողնել տաք շենքի մեջ այնքան ժամանակ, մինչև վոր ամրող նստվածքը լուծվի: Ստացված պարզ լուծույթը լցնում են մի ուրիշ անոթի մեջ և գործածում ախտահանման համար: Այդպիսի Փորմալինը սկզբում վերցրած ստանդարտային Փորմալինից 2 անգամ թույլ ե, այդ պատճառով գրանով ախտահանելու ժամանակ մեկ մաս Փորմալինին, յեթե նա սկզբում 40 տոկոսանոց ե յեղել.

ավելացնում են 150 մաս, իսկ յեթե 30 տոկոսանոց են յեղել, այդ գեղքում 112,5 մաս ջուր:

Նստվածքը սովորաբար առաջանում է Փորմալինը յերկար ժամանակ, մանավանդ ցուրտ տեղում մնաւ լուց: Այդ իսկ պատճառով նստվածքից գերծ մնալու համար Փորմալինը պետք է պահել տաքացվող շենքերում:

Վորովհետև Փորմալինի նստվածքը վերացնելու համար պահանջվում է մի քանի որ, այդ պատճառով ախտահանումից առաջ կանխորոք պետք է ստուգել Փորմալինի ունեցած պաշարը: Նույնը պետք է անել նոր ստացվելիք Փորմալինի հետ, և յեթե Փորմալինը պղտոր է կամ նստվածք ունի, ապա այդ դեպքում վերը նշված ձևով նրան անպայման լուծել:

Յեթե ստացած Փորմալինի թնդության տոկոսը 40%-ից ցածր է, այդ դեպքում աշխատանքային լուծույթ պատրաստելու համար, նրա յուրաքանչյուր մեկ մասին ավելացվելիք ջրի քանակը կարելի յե վորոշել, ողտվելով հետևյալ աղյուսակից:

Փորմալինի թնդության տոկոսը	Մեկ մաս Փորմալինի ավելացվելիք չը քանակը
20 տոկոս	150
25 >	187,5
30 >	225
35 >	262,5
37 >	277,5
39 >	292,5
40 >	300

Վորովհետև սերմացուն Փորմալինով ախտահանելու մրիկի սպորները վոչնչանում են տամկացման ժամանակ և սերմացուն հետազայում անինամ պահելուց կարող են կրկին վարակվել մրիկի սպորներով, այդ իսկ պատճառով թաց ախտահանումից հետո անհրաժեշտ է սերմացուն պաշտպանել կրկնակի վարակումից:

Դրա համար այն շենքերը (պահեստները, ծածկերը և այլն), վորաեղ ախտահանում են կատարում և

վորաեղ ախտահանված սերմացուն չորացնում են, խնամքով մաքրում են աղբից, հատակը և աստիճանները լվանում են Փորմալինի ուժեղ լուծույթով 1:100-ի հարաբերությամբ (40 տոկոսանոցի դեպքում) և 1:75 հարաբերությամբ (30 տոկոսանոցի դեպքում): Ախտահանման աշխատանքների ժամանակ այդ շենքերում կտրականապես արգելվում է վորեից ուրիշ աշխատանք և հատկապես սերմագումար կատարելու, վորովհետև նրանից առաջացող փոշու մեջ կարող են մրիկի սպորներ լինել:

Այն պարկերը, վորոնց մեջ են լցնում ախտահանված սերմացուն, պետք ենախորոք մաքրվեն և ախտահանվեն՝ թրջելով նրանց Փորմալինի լուծույթի մեջ՝ 1:300-ի (40%/⁰-ոց) կամ 1:225-ի հարաբերությամբ (30%/⁰-ոց Փորմալինի դեպքում): Թրջելուց հետո պարկերը քամում են և իրար վրա կուտակելով, 2 ժամով ծածկում նույն լուծույթով թրջված բրեգենսով կամ պարկերով: Դրանից հետո պարկերը չորացնում են և պահպանվում մինչև ախտահանված սերմացուն նրանց մեջ լցնելը:

Ցանքից առաջ շարքացանը նույնապես խնամքով լվանում են Փորմալինի ուժեղ լուծույթով՝ 1 : 100-ի (40%/⁰-ոց) կամ 1 : 75-ի հարաբերությամբ (30%/⁰-ոց Փորմալինի դեպքում), հատուկ ուշադրություն դարձնելով շարքացանի սերմի արկղի և սերմատար խողովակների վրա: Դրանից հետո շարքացանը յերեկոյան ծածկում են բրեգենսով, թողնելով մինչև առավոտ:

ԿԻՍԱԶՈՐ ԱԽՏԱՀԱՆՈՒՄ

Ախտահանման կիսաչոր ձևով կերպովում է վարակի քարամրիկի ու փոշեմրիկի և զարու քարամրիկի դեմ:

Յորենը և տարեկանը կիսաչոր ձևով ախտահանել չեն կարելի, վորովհետև այս ձևով ախտահանելու դեպքում ուժեղ կերպով իջնում է սերմացույի ծլունակությունը:

Կիսաչոր ախտահանման համար Փորմալինի լուծույթը պատրաստվում է հետևյալ կերպ՝ յուրաքանչյուր մեկ մաս 40 տոկոսանոց Փորմալինին ավելացնում են 80 մաս ջուր կամ 1 մաս 30 տոկոսանոց Փորմալինին ավելացնում են 60 մաս ջուր։ Սերմացուն Փորմալինի այս լուծույթով սրսկում են, և 4 ժամ տամկացնում կույտերով բրեղենտի կամ պարկերի տակ։

Կիսաչոր յեղանակով ախտահանումը կատարվում է ԱԲ-2, Պոպովի մեքենաներով և կույտերով։

Կույտերի միջոցով ախտահանումը կատարվում է հետևյալ կերպ. սերմացուն թափում են մոտ 30 սմ. բարձրույթյամբ յերկարավուն կույտով կեղտից մաքրված և Փորմալինի 1:300-ի (40⁰/0-ոց) կամ 1:225-ի հարաբերությամբ (30⁰/0-ոց) Փորմալինի լուծույթով թրջված հատակի կամ բրեղենտի վրա։ Դրանից հետո անպայման ծայրակալ ունեցող սրսկիչ մեքենաներով (ավտոմաքս կամ վերմորել) Փորմալինի 1 : 80-ի (40⁰/0-ոց) կամ 1 : 60-ի հարաբերությամբ (30⁰/0-ոց) Փորմալինի լուծույթի բարակ շիթով սրսկում են այդ կույտը, խնամքով խառնում թիակով, 4 ժամվա ընթացքում յենթարկվում է տամկացման։

Սերմացույի տամկացումը ծածկված կույտերում 4 ժամվա ընթացքում պարտադիր ե, վորովհետեւ հենց այդ ժամանակ ե, վոր Փորմալինի զոլորչիները վոչնչացնում են մրիկի սաղմերը (սպորները)։

Տամկացումից հետո սերմացույի մեջ գտնվող զոլորչիները հեռացնելու նպատակով թիակով խառնում են նրան, վորից հետո առանց չորացնելու կարելի յեցանել։ Կիսաչոր ախտահանումը կատարվում է վոչ չուտ քան քանքից 2 որ առաջ։

Կիսաչոր ախտահանման գեղքում 1 տոնն վարսակի ախտահանման համար պահանջվում է 30 լիտր, իսկ 1 տոնն գարու համար 15 լիտր վերը նշված ձևով պատրաստված Փորմալինի լուծույթ։ Այսինքն մեկ կգ. 40 տոկոսանոց Փորմալինով կարելի յե ախտահա-

նել 27 տոկոսակ կամ 54 տոկոսակ գարի կամ մեկ կգ. 30 տոկոսանոց Փորմալինով կարելի յե ախտահանել 20,3 տոկոսակ կամ 40,6 տոկոսակ գարի։ Յեթե ունեցած Փորմալինի տոկոսը 40-ից -ցածր է, այդ դեպքում նրա յուրաքանչյուր մեկ մասին, կեսաչոր ախտահանման ժամանակ աշխատանքային լուծույթ պատրաստելու համար, ավելացվելիք ջրի քանակը կարելի յե վորոշել՝ ոգտվելով հետևյալ աղյուսակից։

Փորմալինի թնդության
տոկոսը

15	30
20	40
25	50
30	60
35	70
37	74
39	78
40	80

Մեկ մաս Փորմալինին
ավելացվելիք չը քանակը

ՀՀ
ՀՀ

Կիսաչոր, ինչպես և թաց ձևով ախտահանված սերմացուն, ցանքից առաջ և ցանքի ժամանակ կրկնակի վարակումից զերծ պահելու համար, անհրաժեշտ ե պարկերը, ջվաճները, չարքացանները, չենքերը (վորտեղ պահվում ե սերմացուն) ցանքից առաջ անպայման ախտահանել։

ՍԵՐՄԱՑՈՒՅԹԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ ՅԱՐՈՎԻԶԱՅԻՅԹԻ
ԺԱՄԱՆԱԿ

Գարնանացան ցորենի, գարու և վարսակի սերմացուն յարովիզայի ժամանակ ախտահանում են թաց յեղանակով—Փորմալինով։ Դրա համար յարովիզայի ժամանակ սերմերի 2-րդ թրջումը կատարվում է վոչ թե ջրում, այլ Փորմալինի լուծույթում, ավելացնելով մեկ մաս 40 տոկոսանոց Փորմալինին 300 մաս ջուր կամ մի մաս 30 տոկոսանոց Փորմալինին 225 մաս

ջուր, այսինքն յուրաքանչյուր 10 լիտր ջրին ավելացնում են 33 կուբանարդ սմ. 40 տոկոսանոց կամ 44 կուբանարդ սմ. 30 տոկոսանոց ֆորմալին:

Թույյը (Փորմալինը) հավասարապես տարածելու նպատակով, սերմերը ֆորմալինի լուծույթով թրջելուց հետո լավ խառնում են, վորից հետո հավաքում են կույտերով, ծածկում ֆորմալինի լուծույթով թրջված բրեգենտով և 2 ժամ տամկացնում: Յեթէ սերմերի կույտի մեջ ջերմաստիճանն ըստ Ցելսիուսի 5-ից բարձր չէ, ապա անհրաժեշտ ե տամկացումը կատարել 3 ժամ տեղույթյամբ, վորից հետո հեռացնելով ծածկող բրեգենտը, պարկերը և այլն, փոռում են հատակի վրա և խառնում: Չի կարելի թույյլ տալ, վոր սերմացուն ֆորմալինի լուծույթով ախտահանելուց հետո նրանց վրա արևի ճառագայթներ ընկնեն: Մնացած մասում յարովիզացիան կատարում են գյուղատնտեսական կուլտուրաների յարովիզացիայի մասին ակադեմիկոս Տ.Դ. Լիսենկոյի հրահանդի համաձայն:

Յարովիզացիայի գեպքում ցորենի սերմացուն կարելի յե ախտահանել նաև ԱԲ պրեպարատով (1 տոնն սերմացույին վերցնելով 2 կգ. ԱԲ) սովորական ժամկետներում: Յարովիզացիայի յենթակա սերմացուն Դավիդովի փոշու միջոցով ախտահանելն արգելվում է, վորովհետեւ նա գցում է ծլունակույթյունը:

Կորեկը յարովիզացիայի ժամանակ ախտահանում են ֆորմալինով: Ֆորմալինի լուծույթը պատրաստում են ցորենի, գարու և վարսակի համար նշված ձևով: Յարովիզացիայի ժամանակ կորեկի թրջումը կատարվում է 2 անգամ: 1-ին թրջումը կատարվում է ջրի մեջ (1 յենաներ կորեկին վերցնում են 16 լիտր ջուր), իսկ յերկրորդը՝ ֆորմալինի լուծույթում (1 յենաներ կորեկին վերցնելով 10 լիտր լուծույթ): Ֆորմալինի լուծույթի մեջ թրջելուց հետո, կորեկի սերմացուն խնամքով խառնում են, հավաքում կույտերով և 2 ժամով բրեգենտների տակ տամկացնում: Յերկրորդ անգամ թրջելուց մեկ ժամ հետո սերմացուն անհրա-

ժեշտ ե լավ խառնել, վորպեսզի նա հավասարաչափ ներծծի խոնավությունը: Դրանից հետո սերմացուն նորից մեկ ժամով ծածկում են բրեգենտով: Այնուհետեւ սերմացուն թիվակով լավ խառնում են ֆորմալինի գոլորշիները հեռացնելու համար:

Յարովիզացիայի ժամանակ ախտահանումը սերմացուն, կրկնակի վարակումից զերծ պահելու համար, պետք ե նրան խնամքով պաշտպանել: Դրա համար պետք ե ախտահանել շենքերը, պարկերը, ջվամերը, թիւլիները, չոմչաները (սավոկները), բրեգենտները, վորով ծածկում են տամկացման ժամանակ սերմացուն և շարքացաններն այնպես, ինչպես այդ արվում ե թաց ախտահանման ժամանակ:

ՏԵՐՄԻԿ ԱԽՏԱՀԱՆՈՒՄ (ՏԱՔ ԶՐԻ ՄԻՋՈՑՈՎ)

Տերմիկ ախտահանումը կիրառվում է ցորենի և գարու փոշեմբիկների դեմ: Այս մրիկները մյուս տեսակ մրիկներից տարբերվում են նրանով, վոր նրանց մեջ մրիկի վարակման սաղմը գտնվում է վոչ թե հատիկի յերեսին, այլ նրա ներսում:

Բացատրվում է այդ նբանով, վոր ցորենի և գարու փոշեմբիկներով վարակումը տեղի յե ունենում միմիայն այդ կուլտուրաների ծաղկման ժամանակ: Այդ ժամանակ ցորենի և գարու հասկերը վեր են ածվում փոշեմբիկների սպորներից բաղկացած սև փոշու: Փշրված հասկերից սպորները քամու միջոցով ցրվում են ամբողջ արտում և ընկնելով առողջ հասկերի ծաղիկների վարանդի վրա, այնտեղ ծլում են՝ առաջացնելով միցելիումներ: Միցելիումը ներս մտնելով ձեփակերպվող մատաղ սերմերի մեջ, մնում է այնտեղ հանդիսատ դրության մեջ, մինչև այդ հատիկի հող գցելն ու ծլելը:

Փոշեմբիկով վարակված սերմերն արտաքուստ նորմալ տեսք են ունենում: Յանելուց հետո, յերբ հատիկը սկսում է ծլել, այն ժամանակ աճում է և հա-

տիկի մեջ գտնվող միցելիումը, նա աճում է հատիկի հետ և նրա ծաղկման ժամանակ քայլքայում է ամբողջ հասկը, վերածելով նրան ու փոշու:

Վորովհետեւ փոշեմրիկի վարակիչ սաղմը՝ միցելիումը գտնվում է հատիկի ներսում, ուստի արտաքին քիմիական ախտահանումը, վորը կիրառվում է մյուս տեսակ մրիկների դեմ, գարու և ցորենի փոշեմրիկներին չի վոչնչացնում: Այդ պատճառով այս տեսակ մրիկների դեմ պայքարում են սերմերը տաք ջրի մեջ պահելով:

Փոշեմրիկով վարակված ցորենի և գարու սերմացուն սերմիկ ախտահանման յենթարկելը պարտադիր է սելեկցիոն կայանների, շրջանային սերմնարուծական տնտեսությունների և կոլտնտեսությունների սերմադաշտերի համար:

Տերմիկ ախտահանման համար առանձնացված ցորենի և գարու սերմացուն պետք է նախորոք խնամքով զանել քարամրիկի պարկերից, սեպասունկի յեղջրիկներից և ուրիշ կեղտուտ խառնուրդներից. Նրանց ծլունակությունը պետք է համապատասխանի կոնդիցիային:

Վորովհետեւ ցորենի և գարու տարբեր սորտերն և նրանց հասունացման ու բերքահավաքի տարբեր պայմանները սերմիկ ախտահանման բարձր ջերմաստիճաններին տարբեր չափով են դիմանում, ուստի յուրաքանչյուր անդամ, մասսայական սերմիկ ախտահանումից առաջ, պետք է վերցնել մի քիչ սերմ, կատարել փորձնական ախտահանում և վորոշել, թե ինչպես ե ազդում այն սերմերի ծլունակության վրա:

Տերմիկ ախտահանման յենթարկված սերմերի ծլունակության վորոշումը կարող են կատարել սերմստուգող լաբորատորիաները կամ խոճիթ-լաբորատորիաները:

Տերմիկ ախտահանման հետևանքով սերմերի ծլունակության անկումը թույլատրվում է վոչ ավելի 5 տոկոսից (ծլունակությունը վորոշվում է նախնական

տաքացման տվյալներով): Ծլունակությունը 5 տոկոսից ավելի իջնելու դեպքում տերմիկ ախտահանման համար յուրաքանչյուր անգամ պետք է հատուկ թույլտվություն ստանալ Հողդողկոմատից, մարզային, յերկրային Հողբաժիններից, և նոր միայն կատարել ախտահանումը:

Տերմիկ ախտահանման պատճառով ծլունակության իջեցման դեպքում համապատասխան չափով ավելացնում են սերմի ցանքի նորման:

Սերմացուն կարելի յէ տերմիկ ախտահանման յենթարկել ցանքսից 1-ից 1 $\frac{1}{2}$ ամիս առաջ, մինչեւ անգամ աշնանից, սակայն այն պայմանով, վոր ախտահանումից հետո սերմացուն անպայման չորացվի, հասցնելով նրան նորմալ խոնավության և հետազայում ինամքով պահպանվի: Տերմիկ ախտահանումը պետք է այնպիսի ժամանակ կատարվի, վորպեսզի սերմացուն ցրտահար չլինի: Ավելի լավ է կատարել այդ տաք շենքերում:

Տերմիկ ախտահանումը բաղկացած է հետևյալ իրար հաջորդող աշխատանքներից՝

1. Հատիկի ներսում գտնվող փոշեմրիկի միցելիումը ծլեցնելու նպատակով սերմացուն 4 ժամ նախնական թրջման են յենթարկում, 28-ից—32 աստիճան ըստ Ցելսիուսի ջերմություն ունեցող ջրում:

2. Ծլող միցելիումը մեղցնելու նպատակով այդ սերմացուն (ցորենը և գարին) պահում են 8 րոպե 52 աստիճան կամ 7 րոպե 53 աստիճան ըստ Ցելսիուսի ջերմություն ունեցող ջրում:

3. Տաք ջրի ազդեցությունը հատիկի վրա դադարեցնելու նպատակով սերմացուն անմիջապես ընկրղմում են սառը ջրի մեջ:

4. Սերմացուն չորացնում են:

Սերմացույի ակտիվ տաքացման ժամանակ ջրի ջերմությունը պետք է ըստ Ցելսիուսի լինի 53 աստիճանից վոչ բարձր և 52 աստիճանից վոչ ցածր, վորովհետեւ հակառակ դեպքում սերմացույի ծլունակու-

թյունն ուժեղ կերպով կընկնի կամ թե անհրաժեշտ արդյունքները չեն ստացվի:

Ակտիվ տաքացման համար պահանջվող ժամանակը (7-ից 8 րոպե) հաշվում են այն ժամանակակիցնեց, յերբ վոր ջրի մեջ ընկղմված հատիկների շերտում ջերմությունը հասնում է 52-53 աստիճանի:

Ջրի ջերմությունը չափում են ստուգված ջերմաչափերով, վորոնք ունեն բաժանումներ վոչ ոլակաս 60 աստիճանից ըստ Ցելսիուսի: Ուեռմ յուրի ջերմաչափը չի կարելի ոգտագործել: Թույլատրվում է աշխատեցնել միմիայն ստուգված կամ թե պատպորտ ունեցող ջերմաչափերը:


Կոտրվելուց զերծ պահելու, ինչպես նաև ոգտվելի ավելի հարմար դարձնելու նպատակով ջերմաչափերը փայտի մեջ են հարմարեցնում, բայց այնպես, վոր ջուրը ազատ կերպով հասնի ջերմաչափի սնդիկով լի գնդաձեւ մասին:

Սերմացույի տերմիկ ախտահանումը կարելի յե կատարել Ն. Ի. Խոդակովսկու սիստեմի սարքավորման, իսկ ավելի քիչ քանակով սերմացու ախտահանելու համար նաև ավելի պարզ սարքավորման (ցանցապատ հատակ ունեցող դույլերի, տակառների, տաշերի միջոցով):

ՍԵՐՄԱՑՈՒՅԻ ՏԵՐՄԻԿ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ ԽՈԴԱԿՈՎՍԿՈՒ ՍԻՍՏԵՄԻ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Խոդակովսկու սիստեմի սարքավորումը տարբեր տարրողություն ե ունենում: Խոչը տարրողության դեպքում ջուրը տաքացնելու համար պահանջվում է շոգեկաթային տեղակայում հարմարություն՝ այսինքն լոկոմոբիլ կամ աղացի շոգեկաթսա և այլն: Քիչ քանակով սերմացու ախտահանելու դեպքում կարող են ոգտագործել սովորական ջրյեռոցներ, կաթսաներ և այլն: Ելեկտրական եներգիա լինելու դեպքում նրան նույնպես կարելի յե ոգտագործել ջուր տաքացնելու համար:

Խոդակովսկու սիստեմի սարքավորման մեջ վորակես ջրամբար ոգտագործվում են հատիկ փոխադրելու մեկ տոնն տարրողություն ունեցող արկղները (բառարկաները): Վորակեսի արկղները ջուր բաց չժողովնեն, նրա բոլոր անցքերը փակում են յերկաթե սոտիկով կամ ուրիշ անսակի վարեկ մածիկով: Արկղի մեծությունն ե՝ յերկարությունը 265 սմ., լայնությունը վերևի կողմից 125 սմ., լայնությունը ներքեվից (հատակի) 75 սմ., բարձրությունը 75 սմ:



Նկ. 1. 1 Ժամում 3 ցենտներ արտադրողականություն ունեցող տերմիկ ախտահանման սարքավորման սխեման.

Բեստարկաների միջի ջուրը տաքացնում են լոկո-
մորիլից յեկող գոլորշու միջոցով։ Գոլորշին տարվում
ե խողովակներով և ջրի տաքացումը կանոնավորում
գոլորշով, վենտիլների ոգնությամբ։


Բեստարկաները դասավորում են յերկու զուգա-
հեռ շարքերով, նրանց միջև անցնում ե գլխավոր շո-
գետար խողովակը, վորից ճյուղավորվելով ամեն մի
բեստարկայի մեջ ե մտնում շոգետար խողովակ (տես
նկ. 1)։

Յերկաթյա շոգետար խողովակն անցնում ե բես-
տարկայի մեջ, նրա պատի հատակին մոտ։ Խողովակի
ծայրը 10 սմ. վոչ ավելի յերկարությամբ դուրս ե զա-
լիս ջրի մեջ։ Խողովակն անզայման պետք ե անցկաց-
նել կողքի պատի վոչ թե մեջտեղից, այլ անպայման
ներքելի վորեե անկյունից (տես նկ. 1), վորովհետե
այդ դեպքում ջուրը խառնելու կարիքը վերանում ե,
գոլորշին ուժեղ հոսանքով մտնելով ջրի մեջ, նրան
շրջանաձև պտտեցման մեջ ե զնում և ապահովում ե
ջրի համահավասար տաքացումը։

Տաքության կորուստ չունենալու նպատակով շո-
գետար խողովակները հողով ծածկելը խստիվ ար-
գելվում է։

Յեթե անտեսության մեջ յերկաթյա խողովակներ
չեն ձարվում, այդ դեպքում յերկաթյա շոգետար խո-
ղովակ են անցկացնում միմիայն մեկ բեստարկայի
մեջ, այսինքն նրա, վորի մեջ ակտիվ տաքացման են
յերթարկում (52-53 աստիճան), իսկ մյուս բեստար-
կաների մեջ, վորտեղ նախնական տաքացման են յեն-
թարկում (28-32 աստիճան ըստ Յելսիուսի) գոլորշին
կարելի յե անցկացնել ուժինե խողովակի միջոցով,
վորի ծայրին միացնում են յերկաթյա խողովակ և
յերթականորեն իջեցնում ամեն մի բեստարկայի մեջ
մինչև հատակը։

Լոկոմորիլի ներսում անհրաժեշտ ե ինչքան կարե-
լի յե շատ բարձր ճնշում պահպանել (6-8 կը· 1 քառ
սանտիմետրին), վորովհետե գոլորշու բարձր ջերմա-
տիմանի չնորհիվ խնայվում ե ջուրը տաքացնելու հա-
մար պահանջվող ժամանակը, գոլորշու ուժեղ հոսան-
քի չնորհիվ ջուրը լավ ե խառնվում ու բացի այդ
տնտեսվում վառելանյութը։



Նկ. 2. Բեստարկա և զետեղիչներ

Հատիկը լցնում են վոչ այնքան մեծ ցանկապատ
հատակ ունեցող արկղների զետեղիչների մեջ։ Մեկ
բեստարկայի մեջ նախնական թրջման յենթարկելու
ժամանակ տեղափորում են այդ զետեղիչներից 4 հատ։
Զետեղիչների չափերն են՝ յերկարությունը 100 սմ.,
լայնությունը վերևի կողմից 55 սմ., հատակի յեր-
կարությունը 65 սմ., հատակի լայնությունը 55 սմ. և
բարձրությունը 60 սմ.։

Յերմիկ ախտահանման ավելի բարձր եֆեկտիվու-
թյուն ստանալու համար ակտիվ տաքացման համար
(52-53 աստիճանի) ոգտագործվող զետեղիչներն ավելի
լավ ե փայտի փոխարեն, պատրաստել յերկաթից։
Յերկաթը ջերմության լավ հաղորդիչ ե, ուստի և զե-
տեղիչի պատերն արագ կերպով ընկունում են այն
ջրի ջերմությունը, վորի մեջ նրան ընկղմում են։
Նախնական թրջման համար պահանջվող զետեղիչ-

ները կարելի յե պատրաստել 1,5 սմ. վոչ ավելի հաստություն ունեցող տախտակից, վորովհետև տախտակի յուրաքանչյուր 1 սմ. ավելորդ հաստությունն ավելացնում է զետեղիչի քաշը 15 կիլոգրամով: Բացի դրանից, զետեղիչի հաստ պատերը տաք ջրում ավելի դանդաղ են տաքանում և ցածր ջերմաստիճանը հազորդելով պատերի մոտ յեղած հատկիներին, կարող նորանց ջերմաստիճանը պահանջվածից իջեցնել:

Զետեղիչի հատակի ցանցը ժանդումիլուց զերծ պահելու համար ավելի լավ են նրանց ցինկապատ յերկաթալարից պատրաստել: Ցանցը վնասվելուց պաշտպանելու համար նրան ամրացնում են հատակին, ըստ լայնության յերկու գոտի ունեցող շրջանակով:

Զետեղիչները ջրից հեշտ հանելու նպատակով յուրաքանչյուր բեստարկայի շուրջը պատրաստում են փայտյա կամ ջաղակներ կամ քարե բարձրություններ 50-60 սմ. բարձրությամբ: Բեստարկայի միջից պատերի վրա, հատակից 15 սմ. բարձրությամբ պատրաստվում են դարակներ (ալոլկաներ), նրանց վրա 4 հատ սերմացույով լի զետեղիչներ դնելու համար, այն հաշվով, վոր զետեղիչի բերանի բարձրությունը հավասարվի բեստարկայի բերանի բարձրության:

Զետեղիչների կողքերի վերեկի մասից, բերանի մոտ պատրաստում են 2-ական հատ հաստ յերկաթյառներ, վորոնց անզքը պետք է ունենա 6 սմ. վոչ պակաս տրամադիծ: Այդ ողերի մեջ են մտցվում փայտյառներ, վորոնց միջոցով զետեղիչները մեկ բեստարկայից մյուտն են տեղափոխում:

Յուրաքանչյուր զետեղիչի մեջ լցնում են 50 կգ. սերմացու, վորից հետո նախնական թրջման յենթարկելու համար ընկղմում են 28-32 աստիճան ջերմություն ունեցող ջրով բեստարկայի մեջ:

Վորովհետև հատիկը բեստարկայի մեջ մտցնելուց ջրի ջերմությունը 2-3 աստիճանով ընկնում ե, ուստի շշխատանքի հարմարության համար, նախնական թրջման բեստարկայի ջրի ջերմությունը, զետեղիչները

դնելուց առաջ, հասցնում են 34 աստիճանի (ըստ Ցելսիուսի):

Հատիկը ընկղմելուց հետո ջրի ջերմությունը չափում են վոչ թե ջրի վերեկի շերտում, այլ հատիկի մեջ, այդ նպատակով ջերմաչափը մտցնելով հատիկի շերտի մեջ:

Հատիկը 4 ժամ 28-32 աստիճան ըստ Ցելսիուսի ջրի մեջ նախնական թրջման յենթարկելուց հետո, զետեղիչը ջրից հանում են, քամում, դատարկում յերկաթյա զետեղիչների մեջ և տեղափոխում տաք ջրով լիքը ակտիվ տաքացման բեստարկան, պահելով այնտեղ 7 րոպե ըստ Ցելսիուսի 53 աստիճանի կամ 8 րոպե ըստ Ցելսիուսի 52 աստիճանի տակ:

Վորովհետև այս զեպքում ակտիվ տաքացման բեստարկայի ջրի ջերմաստիճանը 2-3 աստիճանով իջնում ե, ուստի անհրաժեշտ են նրա նախնական ջերմաստիճանը հասցնել 54-55 աստիճան ըստ Ցելսիուսի:

Հատիկն ավելի համաչափ տաքացման յենթարկելու համար զետեղիչը ընկղմում են ջրի մեջ արագորեն և ամբողջ խորությամբ, այնպես վոր զետեղիչների ձողերը նատեն բեստարկայի կողերի վրա և վարպեսպի ջուրը հարավորության սահմաններում կանգնի զետեղիչի բերանին հավասար: Վորովհետև զետեղիչների մեջ լցված 50 կիլոգրամ սերմացուն բռնում ե զետեղիչի ունեցած 60 սանտիմետրից ընդամենը 20 սմ., այդ պատճառով զետեղիչը ջրի մեջ ամբողջ խորությամբ ընկղմելուց, ջուրը լցնում ե զետեղիչի դատարկ տարածությունը և արագորեն անցնում ցանցապատ հատակի ու հատիկի ամրող շերտի միջով, և դրանով իսկ ապահովում սերմացույի համաչափ տաքացումը:

Ջրի յերեսը հավաքված կեղտն ու մրիկի պարկերը հավաքում են քառանկյունի, ցանցավոր թիակով: Զետեղիչները պատրաստելիս պետք է անպայման պահպանել հրահանդում նշված չափսերը: Զետեղիչի տարրողությունը փոքրացնելու (որինակ բարձրությու-

նը 60 սմ-ի փոխարեն 40-50 սմ. վերցնելով) և սերմացույի նույն քանակը (50 կգ.) թողնելու դեպքում սերմացույին անհրաժեշտ ջերմաստիճան և համաչափ տաքացում տալ չեն հաջողվի:

Տաք ջրի մեջ զետեղիչներն աճապայման պետք են լոկմվեն ամբողջովին, հակառակ դեպքում նրա պատերին կարող են կպած մնալ քարամբիկի կամ փոշեմբիկի չվոչնչացված սպորներ և զետեղիչները դատարկելիս կարող են սերմացուն կրկին վարակել:

Սերմացուն լավ տաքացման յենթարկելու համար, տարկայի մեջ, վորտեղ հատիկը պաղեցնելուց հետո անհրաժեշտ են ձողերի ոգնությամբ նրան 2 անդամ բարձրացնել մինչև հատիկների յերևալը, վորպեսզի վորոշ չափով պաղած ջուրը թափվի բեստարկայի մեջ: Հատ վորում զետեղիչի մեջ ջերմությունը պետք են հասցնել ըստ Ցելսիուսի 52-53 աստիճանի:

Յեթե ակտիվ տաքացման մեկ բեստարկայի մեջ ընկղմում են սերմացույով լցված վոչ թե մեկ, այլ 2-3 զետեղիչներ, այդ դեպքում նրանք ընկղմվում են հերթականությամբ, այսինքն 1-ը լրիվ ջրի մեջ ընկղմելուց հետո նոր մյուսը: Հակառակ դեպքում ջուրն անմիջապես չի կարող ներս խուժել ցանցապատ հատակից բոլոր զետեղիչների մեջ և բեստարկայից իդուր տեղը մեծ քանակությամբ ջուր կթափվի: Ակտիվ տաքացման յենթարկելու համար մեկ բեստարկայում 3 զետեղիչներից ավելի ընկղմել հարավոր չեն, վորովհետեւ տեղը նեղ են հատակի մեծ քանակությունից ջուրն արագ կերպով սառչում են:

Զետեղիչը 7-8 րոպե տաք ջրի մեջ պահելուց հետո հանում են և անմիջապես մացնում սառը ջրով լի բեստարկայի մեջ, վորտեղ հատիկը պաղեցնելուց հետո, բարակ շերտով փռում են պաղեցնելու համար:

Վորովհետեւ տերմիկ ախտահանումը բաժանվում է 2 ժամի՝ նախնական թրջում, վորը տեսում է 4 ժամ և ակտիվ տաքացում, վորը հաշվվում է բոպեներով, ուստի աշխատանքն այնպես պետք են կազմակերպել,

վորպեսզի ախտահանումը կատարվի անընդհատ: Այսպիս որինակ, մեկ ժամում 6 յենտներ արտադրողականություն ունեցող սարքավորման դեպքում ակտիվ տաքացման համար յուրաքանչյուր բաժինը պետք են հավասար լինի մեկ յենտների (այսինքն 2 զետեղիչ 50-ական կիլոգրամից): Ակտիվ տաքացման համար պահանջվում է 7-8 րոպե և հատիկը դատարկելու համար՝ 3 րոպե, հետեւապես յուրաքանչյուր բաժինն ախտահանումը համար պահանջվում է 10-11 րոպե: Ուստի անընդհատ աշխատանքը կազմակերպելու համար անհրաժեշտ յուրաքանչյուր 10 րոպեյից հետո ունենալ 4 ժամ նախնական թրջման յենթարկված սերմացույի հատիկի պատրաստման բաժին (աղոցիա):

Այս բանին համում են հետևյալ կերպ: որինակ՝ առավոտյան ժամը 6-ին առաջին զետեղիչները՝ լցված 50-ական կիլոգրամ սերմացույով՝ դնում են ըստ Ցելսիուսի 28-32 աստիճան ջերմություն ունեցող ջրի մեջ, ժամը 6 անց 10 րոպե դնում են 2-րդ զույգ զետեղիչները, 6 անց 20 րոպե 3-րդ զույգը և այլն: Ցուրաքանչյուր 10 րոպեյից հետո դրվում են նոր զետեղիչներ: Ժամը 9-ը անց 50 րոպեյին դնում են վերջին զույգը: Ժամը 10-ին՝ առաջին զույգը զետեղիչները, վոր դրվել ելին ժամը 6-ին, 4 ժամ պահելուց հետո հանում են այդ բեստարկայից, տեղափոխում ակտիվ տաքացման համար ջրով լի բեստարկան, իսկ նրա տեղը դնում են զետեղիչների նոր զույգը: Հետո հանում են ժամը 6-ից անց 10 րոպեյին զրված զետեղիչների զույգը, տեղը դնելով նորը և այսպես սահմանվում են անընդհատ աշխատանքը:

Մեկ ժամում 6 յենտներ արտադրողականություն ունեցող սարքավորման համար պահանջվող կահավորումը

1. Ցանցապատ հատակ ունեցող արկղ զետեղիչներ 50 հատ
2. Բեստարկաներ նախնական թրջման համար, հատակից 15 ամ՝ բարձրությամբ դարձակով կտրված՝ 12 »

3.	Բեստարկաներ առանց դարակների ակտիվ տաքացման համար	1 հատ
4.	Բեստարկաներ առանց դարակների սերմացուն սառեցնելու համար	1 »
5.	Վենտիլներ գույրչին բաց թողնելու համար	13 »
6.	0,5—1 դույմ արամաղիծ ունեցող յերկաթյալ խողովակներ	30 մետր
7.	Յերկաթյա ցանց, վորի անցքերի միջոցով հատիկը չկարողանա անցնել, զետեղիչների հատիկը պատելու համար	20 ք. մետր
8.	Ջերմաչոփեր	3 հատ
9.	Լոկոմոբիլ	1 »
10.	Մերմացուն չորացնելու համար	750 ք. մետր
11.	Չողեր գետեղիչները տեղափոխելու համար	4 դույմ

Մեկ ժամում 6 ցենտներ տարողությամբ սարքավորումների վրա աշխատեցնելու համար պահանջվող աշխատուժը

1.	Բրիդադիլ	1 հոդի
2.	Բանվորներ ակտիվ տաքացման աշխատանքների համար	4 »
3.	Բանվորներ ջուր տեղափոխելու համար	1 »
4.	Բանվորներ սերմացուն պահեստից բեստարկա և բեստարկայից հարթակը տեղափոխելու համար	3 »
5.	Բանվորներ սերմացուն չորացնելու համար	» »
6.	Բանվորներ վառելանյութ տեղափոխելու համար	1 »
7.	Հնոցապահ	1 »

Սերմացույի տերմիկ ախտահանումը ցանցապատ հատակ ունեցող դույլերի և ուրիշ հասարակ սարքավորման միջոցով


Քիչ քանակությամբ սերմացու ախտահանելու համար կարելի յեռագույլ ցանցապատ հատակ ունեցող դույլերից (բարձրությունը 52 սմ., տրամադիմումը 34 սմ.), ներսից պարկի կտոր կարած քթոցներից, վերեվի կողմից բռնելու հարմարություն ունեցող կիսապարկերից, տաշտերից, հնձաններից, տակառներից: Տաշտերը, հնձանները պետք են ունենան 15 դույլեր

վոչ պակաս տարողություն, վորակեսղի ցանցապատ հատակ ունեցող դույլերը, քթոցները և կիսապարկերը ամբողջովին ջրի մեջ ընկում վեն:

Զուր տաքացնելու համար կարելի յեռագույլ կաթսաներ, թեյի կուբեր և այլն:

Տակառներում գտնվող ջրի և սերմացույի պահանջվող ջերմաստիճանը կանոնավորում են տաք կամ սառը ջուր ավելացնելու միջոցով:

Ցանցապատ հատակ ունեցող դույլերի միջոցով տերմիկ ախտահանման տեխնիկան նույնն է, ինչ վոր կողակովսկու սարքավորման ոգտագործման դեպքում: Այս գեպքում սերմացուն նախնական թրջման յենթարկելու համար լցնում են ցանցապատ հատակ ունեցող 12 կիլոգրամ տարողություն ունեցող դույլերի կամ ներսը պարկի կտոր կարած քթոցների և կիսապարկերի մեջ: Այս քանակից ավելի լցնել չել կարելի, վորովհետև այդ գեպքում սերմերը լրիվ տա-



Նկ. 3. Ցանցապատ հատակ ունեցող դույլ:

քացման չեն յեթարկվի: Քթոցները և կիսապարկերն ոգտագործվում են միայն նախնական թրջման յենթարկելու համար: Ակտիվ տաքացումն անպայման կատարվում է ցանցապատ հատակ ունեցող դույլերում (նկ. 3):

Ցանցապատ դույլերով և քթոցներով անընդհատ աշխատանք կազմակերպելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր 10 բոպեյից հետո մի նոր բաժին (12

կդ.) սերմացու ընկղմել նախնական թրջման տակառի մեջ և ավարտել այն աշխատանքի վերջից 4 ժամ առաջ։ Աշխատանքի այսպիսի կազմակերպումը թույլ կտա անընդհատ ունենալ ակտիվ տաքացման համար պատրաստի սերմացու։

Սերմացուն ջրի մեջ ընկղմելու ժամանակ ջրի յերեսին լողացող քարամրիկի պարկերը և կեղտն անպայման պետք ե հավաքել և դուրս հանել։ Նախնական թրջման ժամանակ յուրաքանչյուր տակառի կամ հնձանի մեջ կարելի յե դնել 2 գույլ կամ քթոց, կիսապարկ, խսկ ակտիվ տաքացման ժամանակ միայն մեկ դույլ։ Վորպեսզի այս հասարակ սարքավորումների միջոցով կարելի լինի յուրաքանչյուր ժամում 72 կդ. սերմացու ախտահանել, անհրաժեշտ ե ունենալ՝

1.	Տակառներ նախնական թրջման համար . . .	12 հատ
2.	Տակառներ ակտիվ տաքացման համար . . .	2 »
3.	Տակառներ սառեցնելու համար	1 »
4.	Ցանցապատ հատակ ունեցող դույլեր, կամ ներսից պարկի կտորով կարգած քթոցներ կամ կիսապարկեր, նախնական թրջման համար, յել-նելով յուրաքանչյուր տակառում 2 գույլ կամ պարկ ընկղմելու հաշվից	24 հատ
5.	Ցանցապատ հատակ ունեցող դույլեր ակտիվ տաքացման համար	2 »
6.	Ծերեփ-ջրի յերեսին լողացող կեղտի և քարամրիկի պարկերը հեռացնելու համար . . .	1 «
7.	Ջերմաչափ	3 »
8.	Ծննդ սերմացուն չորացնելու համար . .	75 ք. մետր

ՍԵՐՄԵՐԻ ՉՈՐԱՅՈՒՄԸ

Սերմացույի չորացումը կատարվում է արեկի տակ, խսկ անձրևոտ որերին ծածկի տակ։ Չորացման համար սերմացուն լցնում են բրեղենտի կամ տախտա-

կյա հատակի վրա, 5 սմ. բարձրությամբ զուգահեռ շերտերով, վորոնց մեջ նույն լայնությամբ շերտով թողնում են ազատ տարածություններ, վորպեսզի թե սերմացուն և թե հատակը միաժամանակ չորանան։ Յեթե սերմացուն լցնենք հատակի վրա առանց ազատ տարածությունների, այդ գեղքում հատակը կամ բրեղենտը չեն չորանա և նրանց կամած հատիկները կը-ծծեն, յերբ վոր հատիկներն աստիճանաբար սկսում են չորանալ, նրանց խառնելու միջոցով տեղափոխում են հատակի չոր տեղերը։ Վորպեսզի տերմիկ ախտահան-ձան յենթարկված սերմացուն նորից փոշեմրիկով և քարամրիկով չվարակվի հատակից կամ բրեղենտափից, յերջինները պետք ե նախորոք ախտահանձան յենթար-կել 40 տոկոսանոց ֆորմալինի լուծույթով 1:300-ի հարաբերությամբ կամ 30 տոկոսանոց ֆորմալինի լուծույթով 1:225-ի հարաբերությամբ։

Չորացման համար պահանջվում է նայած յեղա-նակին 1-ից 3 և ել ավելի որ։ Վորոշ չափով չորացված սերմացուն տեղափոխում ե շենք, վորտեղ լցնում են 25 սմ. շերտով և ամեն որ թիակով խառնում։

Յեթե տերմիկ ախտահանումը կատարում են ցան-քից 1-1½ ամիս առաջ կամ աշնանից, այդ գեղքում սերմացուն պետք ե հասցնել նորմալ խոնավության, հետևելով, վորպեսզի պահպանման ժամանակ ինքնա-տաքացում չառաջանա։

Յեթե ախտահանումը կատարվում է ցանքի ժա-մանակ և հողը բավականին խոնավություն ունի, այդ գեղքում չորացումը մինչև վերջ չի հասցվում և ՄՏ կայանի կամ խորհանտեսության գյուղատնտեսի թույլտվությամբ սերմացուն կարելի յե ցանել այն-պիսի խոնավությամբ, վորպեսզի չարքացանի ցանող մասը կարողանա ցանել առանց հատիկներին վնասելու։ Այս գեղքում պետք ե հիշել, վոր տաքացված հատիկ-ները ծավալով մեծ են լինում, ուստի չարքացանը այնպես պետք ե կարգավորել, վորպեսզի նա տա ախ-տահանչած սերմերի ցանքի լրիվ նորմա։

Բարձր խոնավություն ունեցող (վոչ լրիվ չորացած) սերմերն արգելվում ե ցանել չողերում, վորովհետև այդ դեպքում ծլունակությունը կարող ե իջնել:

Տաքացված սերմացույից յուրաքանչյուր յերեք որը մեկ անգամ վերցնում են նմուշ նրա ծլունակությունը վորոշելու համար: Նմուշները պետք ե վերցնել յուրաքանչյուր պարտիայից կամ յուրաքանչյուր որվա ընթացքում տաքացված սերմացույից:

Յեթե ախտահանված սերմերի ծլունակությունն իջնում ե, ցանելու ժամանակ համապատասխան քանակով պետք ե ալիբացնել սերմի ցանքի նորման:

Ախտահանված սերմացուն ցանելու ժամանակ պետք ե անպայման շարքացանն այնպես կորդավորել, վորպեսզի նա տա սերմերի լրիվ ցանքի նորման:

Տերմիկ ախտահանման ժամանակ վոչնչանում են նաև ցորենի և գարու քարամբիկների սպորները: Դրա համար յեթե սերմացուն տերմիկ ախտահանման ե յենթարկել, այլևս քիմիական ախտահանման յենթարկել հարկավոր չե: Տերմիկ ախտահանումից հետո սերմացուն կարող ե կրկնակի վարակման յենթարկվել պարկերի, բրեզենտների, շարքացանի և այլնի մեջ գտնվող ցորենի կամ գարու քարամբիկով: Դրա համար պարկերը, ջլաները, բրեզենտները, չորացման տեղերը (հատակը) և այլն պետք ե ախտահանել 40% ֆորմալինի (1:300-ի հարաբերությամբ) կամ 30% ֆորմալինի (1:225 հարաբերությամբ), իսկ մեքենաները և պահեստները 40% ֆորմալինով 1:100-ի կամ 30% ֆորմալինով 1:75-ի հարաբերությամբ:

Յեթե սերմացուն տերմիկ ախտահանման են յենթարկել աշնանից կամ ցանքից շատ առաջ, այդ դեպքում, քարամբիկի դեմ պայքարելու նպատակով, (վորի սպորներով սերմացուն յերկար պահելուց կարող ե վարակված լինել), ցանքից առաջ պետք ե ախտահանել ԱԲ պրեպարատով:

Վորպեսզի տերմիկ ախտահանման յենթարկված սերմերով ցանված դաշտերը չվարակվեն փոշեմբիկի սպորներով չախտահանված սերմերով ցանված դաշտերից, ախտահանված սերմերով ցանված դաշտերը պետք ե անջատել մյուսներից 300 մետր լայնություն ունեցող գոտով:

Տերմիկ ախտահանման հետ միասին փոշեմբիկի վեմ պայքարելու նպատակով ցորենի և գարու դաշտերից պետք ե հեռացնել փոշեմբիկով վարակված հասկերը: Այս միջոցառումը կատարում են տերմիկ ախտահանման յենթարկված սերմերով ցանված դաշտերում:

Դաշտերից փոշեմբիկով վարակված հասկերի հեռացումը կտրելու միջոցով կատարվում ե միմիայն հասկակալման ժամանակ, ծաղկումից առաջ: Վարակված հասկերի հեռացումը դաշտից, ծաղկման ժամանակ կամ հետո արգելվում ե, այս դեպքում նպատակին չենք հասնում, վորովհետև փոշեմբիկով վարակումը տեղի յե ունենում ծաղկման ժամանակ:

Վորպեսզի վարակված հասկերը կտրելու ժամանակ փոշեմբիկի սպորները չփոշանան, անհրաժեշտ է կտրված հասկերը զգուշությամբ դարսել ջուր լրցված դույլի մեջ և դույլը լցնելուց հետո անմիջապես հասկերը թաղել հողի մեջ: Վարակված հասկերի կտրելը և հեռացնելը պետք ե կատարել կինամքով և ամեն որ հասկակալման ամբողջ ժամանակաընթացքում, վորպեսզի հիվանդ վոչ մի հասկ չմնա: Վարակված հասկերը պետք է զգուշութեն կտրել, վորպեսզի փոշեմբիկի սպորները չցրվեն, չթափվեն հարեան առողջ բույսերի վրա և վորպեսզի վարակված հասկերը չքսվեն առողջ ներին:

ՅԱՐՈՎԻԶԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱԿԱՄ ՍԵՐՄԱՅՈՒՅԻ
ՏԵՐՄԻԿ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

Յարովիզացիայի յենթակա սերմացույի տերմիէ
ախտահանումը կատարվում է վերը նշված ձևով:

Տերմիկ ախտահանման յենթարկված սերմացուն
չորացնում են այնքան, վորպեսզի նա իր մեջ պարու-
նակի յարովիզացիայի պրոցեսը ճիշտ կատարելու հա-
մար պահանջվող խոնավությունը: Այս դեպքում՝
սերմացույի չորացման ժամանակարնթացքը վորչե-
լու համար անհրաժեշտ է տերմիկ ախտահանման
յենթակա սերմացույի մի մասը կշռել ախտահանումից
առաջ և հետո :

Յարովիզացիան կատարում են այն ժամանակ,
յերբ վոր գարնանացան փափուկ ցորենների և վաղա-
հաս կարծր ցորենների 100 մասի մեջ մնում է 31 մաս
ջուր, գարնանացան ուշահաս կարծր ցորենների մեջ
33 մաս և գարնանացան գարու մեջ 35 մաս ջուր:

Այնուհետև յարովիզացիան շարունակում են կա-
տարել ակադեմիկ Տ.Դ. Լիսենկոյի հրահանդի համա-
ձայն:

ՏԵՐՄԻԿ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԵՖԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Տերմիկ ախտահանման յենթարկված սերմացույի
յուրաքանչյուր պարտիայի համար կազմվում է ակտ
դյուզատնտեսի, կոլտնտեսության նախագահի և ախ-
տահանումն անմիջապես կատարող անձնավորության
ստորագրությամբ:

Սերմացույի տերմիկ ախտահանման վորակը գնա-
հատվում է ապագրոբացիայի կամ հացահատիկային
կուլտուրաների մրիկով վարակվածությունը պարզե-
լու համար կատարվող հետազոտությունից ստացված
արդյունքների հիման վրա:


Յեթե տերմիկ ախտահանումը ճիշտ է կատարված,

դաշտերը վոշեմը կիրար աղատ կլինեն:
Հետագուառությունը կատարում են ամեն տարի,
արդյունքները ճեակերպվում հատուկ ակտով և դրանց
հիման վրա վորոշում այդտեղից ստացված սերմերի
հետագա տերմիկ ախտահանման յենթարկելու անհրա-
ժեշտությունը:

ՍԵՐՄԱՅՈՒՅԻ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Չոր ախտահանման համար սպագործվող մեքենաներ

«Իղեալ»-ընդհատ (բաժիններով) աշխատող մե-
քենա յէ, աշխատեցնում են ձեռքով, պտտեցնում են



Նկ. 4. ԱԲ-2 Ունիվերսալ ախտահանիչ մեքենա.

5 բոպե, տալով յուրաքանչյուր բոպեյում 50 պտույտ:
Մեքենայի մեջ լցնում են 50 կիլոգրամ սերմացու:
Մեկ ժամի արտադրողականությունն է 4 տեսաներ:
Աշխատեցնելու համար պահանջվում է 2 հոգի:

«Ուրոժայ» մեքենան աշխատում է «Իղեալ»-ի նման, բայց այս մեքենայի մեջ լցնում են 100 կիլոգրամ. մեկ ժամվա արտադրողականությունն է 8 տեսաներ: Աշխատեցնելու համար պահանջվում է 3 հոգի:

Անընդհատ աշխատող «Ունիվերսալ ԱԲ-2» մեքենան աշխատեցվում է ձեռքով կամ մոտորով, ոգտագործվում է չոր, թաց և կիսաչոր ախտահանման համար: Մեկ ժամվա արտադրողականությունն է՝ ցորենի համար 2 տոնն, թեփուկավոր կուլտուրաների համար՝ 1,7 տոնն: Աշխատեցնելու համար չոր ախտահանման դեպքում պահանջվում է 4 հոգի, իսկ թաց և կիսաչոր ախտահանման դեպքում — 6 հոգի:


Պոպովի ունիվերսալ անընդհատ աշխատող մեքենան գործի յեղին գործում մոտ 2 ձիու ուժանոց մոտորով: Նորմալ աշխատելու դեպքում մեքենայի բանվորական (շվիկի) փոկանիվի պտույտների քանակը մեկ րոպեյում հասնում է 400-ի. մեքենայի արտադրողականությունն է՝ ցորենի համար 10 տոնն, թեփուկավոր կուլտուրաների համար 6-7 տոնն: Մեքենան մեկ հերթափոխության ժամանակ սպասարկելու համար պահանջվում է 10 հոգի: Մեքենայի համար նկատի յև ունեցված խոշոր տնտեսություն:

Յեթե չոր ախտահանման մեքենաները չեն բավարարում կամ նրանք չկան, այդ նպատակով կարելի յեղին հարմարեցնել տակառներ: Տակառները պետք են լինեն ամուր, առանց անցքերի: Ցանկալի յեղ, վոր տակառի մեծությունը լինի՝ յերկարությունը՝ 56 սմ, տրամադիմը՝ 48 սմ: Տակառի միջով անց են կացնում մի տառանցք, վորի մեկ ծայրից ամրացնում են բռնակ՝ տակառը պտտեցնելու համար: Մերմացուն խառնելու համար տակառի ներսում, առանցքի վրա թեք դրությամբ ամրացնում են 3 մատ լայնությամբ փայտյա ծողիկ: Մերմացուն լցնելու համար տակառի վրա անցք են պատրաստում ամուր փակվող կափարիչով:

Մերմացուն ախտահանիչ նյութերի հետ լավ խառ-

նելու համար տակառի մեջ լցնում են 50 կգ. վոչ ավելի համար: Մերմացվի յուրաքանչյուր բաժինը (50կգ) խառնում են 5 րոպե, մի րոպեյում 40 պըտույտի արագությամբ:

Ընդհատ աշխատեցվող մեքենաների վրա աշխատող բանվորները սկզբնական շրջանում չեն կարողա-



Նկ. 5. Չոր ախտահանման համար
հարմարեցված տակառ.

նում պահանջվող արագությամբ մեքենայի բարարանը կամ տակառը պտտեցնել, դրա համար անհրաժեշտ են սկզբում մի քանի բաժին ախտահանել ժամացույցի ողնությամբ այնպես, վորպեսզի 5 րոպեյի ընթացքում «Իղեալ» և «Ուրոժայ» մեքենաները կատարեն 250 պտույտ, իսկ տակառը 200 պտույտ: Այս համգամանքը շատ կարևոր է, վորովհետեւ ավելի արագ կամ ավելի չափանիշով պտտեցնելու դեպքում ախտահանման պահանջված վորակը չի ապահովվում:

Մեքենան ախտահանման աշխատանքներին նախա-

պատրաստելիս անհրաժեշտ և տակառի անցքերն այնպես փակել, կափարիչն այնպես ամրացնել, վորպեսզի ախտահանման աշխատանքների ընթացքում թույնը ողը չցնդի: Բացի դրանից, ախտահանված սերմացուն պետք է գատարկել ամուր և խիտ գործվածք ունեցող պարկերի մեջ:

Ախտահանման ժամանակ անհրաժեշտ և խիստ կերպով պահպանել դողիբովվկան: Այդ նպատակով ընդհատ աշխատող մեքենաների համար յուրաքանչյուր անգամ կշռում են թույնը կամ նախորոք պահեստից ստանում են կշռված թույնը թղթի մեջ կապած, առանձին բաժինների համար:

Անընդհատ աշխատող (ԱԲ-2 և Պոպով) մեքենաների համար դողիբովվկանների ճշտության ստուգումը կատարվում է հետեւյալ կերպ՝ մեքենայի թույնի արկղի տակ դնում են թիթեղյա արկղիկ, վորի մեջ և Հավաքվում ամբողջ պրեպարատը մեկ ցենտներ սերմացուն մեքենայով անցնելու ժամանակ: Հավաքված թույնը կշռում են. այս գործողությունը կրկնում են մի քանի անգամ, մինչև վոր մեքենայի թույնի արկղի կանոնավորիչը տալիս է մեկ ցենտների համար պահանջված քանակի թույն, այսինքն ԱԲ-ի դեպքում մեկ ցենտների համար 200-300 գրամ և Դավիթովի փոշու դեպքում 75-100 գրամ (նայած դողիբովվկային):

Մեքենան աշխատեցնելիս կատարում են դողիբովվկանների կրկնակի ստուգում, համեմատելով ախտահանված սերմացույի քանակը ծախսված ախտահանիչ նյութի քանակի հետ: Յեզ յեթե նորմայից տարբերվում է, այդ դեպքում վերը նշված ձևով կատարում են կրկնակի ստուգում:

ԹԱՅ ՅԵՎ ԿԻՍԱՌՈՐ ԱԿՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Թաց ախտահանման համար գործադրվում են հետեւյալ մեքենաները
1. Անընդհատ աշխատող «Գեյլա» մեքենան. աշ-

խատեցվում է ձեռքով: Մեկ րոպեյում 60 պտույտ տալու դեպքում մեկ ժամում ախտահանում է մեկ տոնն սերմացու: Աշխատեցնելու համար պահանջվում է 4 հոգի:

2. Անընդհատ աշխատող «Եքստրա» մեքենան. աշխատեցվում է ձեռքով: Մեկ րոպեյում 60 պտույտ անելու դեպքում ախտահանում է մեկ ժամում մեկ տոնն սերմացու: Աշխատեցնելու համար պահանջվում է 4 հոգի:

3. ԱԲ-2 և Պոպովի սիստեմի ունիվերսալ մեքենաները, վորոնք նույնպես գործադրվում են թաց և կիսաչոր ախտահանման համար:

ԱԿՏԱՀԱՆՄԱՆ ՎՈՐԱԿԻ ՀԱԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ախտահանման ոպերատիվ աշխատանքների սկզբից սիստեմատիկորեն կատարվում է աշխատանքների վորակի ստուգում:

Ստուգման ժամանակ պարզվում է՝
ա» կաղըերի պատրաստականությունը և ախտահանման տեխնիկայի յուրացումը նրանց կողմից.

բ) ախտահանիչը մեքենաների առկայությունն ու նրանց պիտանիությունը և ախտահանիչը թույների առկայությունն ու վորակն ըստ սերտիֆիկատների (անալիզի արդյունքների) և Փիզիքական հատկությունների:

գ) ախտահանիչը թույների քանակի ճիշտ գործումը, ծախսված թույնի քանակը ախտահանված սերմացույի քանակի հետ համեմատելու միջոցով:

Ախտահանիչը մեքենայի աշխատանքային ուժիմիւր պահպանումը (պտույտական արագությունը, սերմերի խառնելու ժամանակի տեսողությունը):

Ֆորմալինի նկատմամբ ստուգում են աշխատանքային լուծույթի պատրաստման ձևը և պայմանները: Նաև ստուգվում են ախտահանման պայմանները (սերմացույի թրջումը, տամկացումը, չորացումը, շենքերի նախապատրաստումը).

գ) սերմացույի հավասարաչափի փոշոտվածությունը, վերցրած տարբեր նմուշների առանձին հատիկներն արտաքուստ զննելու միջոցով:

Հատիկների զննման ժամանակ վերցնում են նըմուշներ քիմիական անալիզի համար, վորի միջոցով պարզվում են կազողունակությունը, համաչափի փոշոտումը, փաստորեն վերցված դոզիրովկան: Նմուշն անալիզի համար ուղարկում են մոտակա լաբորատորիան:

Ստուգման արդյունքները ձևակերպվում են տետրով, նշելով նրանց մեջ նկատված թերությունները և ուղղելու միջոցները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Ախտահանիչները ուժեղ թույներ են: Ախտահանման, մանավանդ չոր ախտահանման ժամանակ անհրաժեշտ է ճիշտ կազմակերպել աշխատանքի անվտանգությունը:

2. Աշխատանքի ղեկավարը (գյուղատնտեսը, կուտնահանության պայքարի կազմակերպիչը) պետք է ծառնոթացնի բանվորներին ախտահանման աշխատանքի անվտանգության կանոնների հետ:

3. Չոր ախտահանման աշխատանքներին 'Հղի' և կրծքով կերակրող կանանց, ինչպես նաև անչափահանների (մինչև 16 տարեկան) մասնակցությունն արգելվում է:

4. Չոր ախտահանումով անմիջապես զբաղված բանվորները պետք է աշխատեն որական 6 ժամից վոչ ավելի:

5. Չոր ախտահանումն անպայման պետք է կատարել բացությա— բնակելի տներից հեռու տեղում, իսկ անձրևային յեղանակներին՝ ծածկի տակ: Ախտահանման ժամանակ քամի լինելու դեպքում մեքենան պետք է այնպես դնել, վորպեսզի թույնի փոշին չդնա ղեղի բնակելի շենքերը, գոմերը և արոտները:

6. Ախտահանման աշխատանքներին մասնակցող բանվորներին պետք է տալ խալաթներ, իսկ չոր ախտահանման ժամանակ՝ ուսպիրատուբներ, ակնոցներ և կոմբինեզոններ:

Յեթե ուսպիրատուբներ չկան, այդ դեպքում անհրաժեշտ է քիթը և բերանը փակել թաց բարակ կտորով կամ մարլայով:



Նկ. 6. Բանվորը ուսպիրատորով և ակնոցով

7. Ախտահանման բոլոր կետերը պետք է ապահովել ջրով, ոճառով և սրբիչով:

8. Չոր ախտահանիչ մեքենաները և հարմարեցված տակառները աշխատանքի ժամանակ պետք է ամուր կերպով փակել, վորպեսզի թույնի փոշին դռւրս չտա:

9. Աշխատանքի ժամանակ արգելվում է ուտելն ու ծխելը: Ախտահանված հատիկները ծածկել չի կարելի:

10. Թունավորման նշաններ ունեցող բանվորներին պետք է անմիջապես ուղարկել բժշկական մոտակա կայանը:

11. Աշխատանքների վերջում հագուստը, արտհագուստը պետք է խնամքով թափ տալ, յերեսը մա-

քուր լվանալ, իսկ բերանը մաքուր ջրով վողողել:
Խստիվ արգելվում և արտհագուստը տուն տանել:

12. Ռեսպիրատորները և պաշտպանող ակնոցները
պետք ե խնամքով մաքրել:

13. Ախտահանումից հետո ամբողջ դործիքները,
վորոնք գործադրվել են ախտահանման ժամանակ,
ինչպես նաև պարկերը, ջվալները, տախտակյա
արկղները պետք ե խնամքով լվանալ, իսկ ջուրը պետք
ե թափել ջրհորներից հեռու տեղ փոսերի մեջ և հողով
ծածկել:

Թափված թույնը և ախտահանված առանձին հա-
տիկները պետք ե հավաքել և նույնպես հողով ծած-
կել:

14. Զոր ձեռվ ախտահանված սերմացուն արգել-
վում և ձեռքերով ցանել:

15. Ցանելուց հետո ցանող մեքենան, սերմի
արկղը, կոճերը և սերմատար խողովակները ջրով
լվանալու միջոցով պետք ե խնամքով մաքրել չոր ախ-
տահանիչ թույներից և սրբել սոլիդոլով կամ վերջինը
չլինելու դեպքում տավոտով թրջված չորով:

ԱԽՏԱՀԱՆԻՉ ԹՈՒՅՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ԲԱՑ
ԹՈՂՈՒՄԸ, ՅԵՎ ՓՈԽՎԴՐՈՒՄԸ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Վորովհետեւ ախտահանման համար դործադրվող
բուժանյութերը հանդիսանում են ուժեղ թույներ և
վորապեսզի նրանց պահպանման և փոխադրման ժամա-
նակ անզգույշ վերաբերվելուց թունավորման դեպքեր
տեղի չունենան, անհրաժեշտ ե թույների պահպան-
ման, բաց թողնելու և փոխադրման ժամանակ խստիվ
պահպանել հետեւյալ կանոնները՝

1. Կոլտնտեսությունները պետք ե ստանան այն-
քան թույն, վորքան պահանջվում ե ըստ ախտահան-
ման պլանի:

2. Կոլտնտեսությունների ստացած ախտահանիչ-

ները պետք ե պահել առանձին շենքերում, կողպեքի
տակ:

Այն շենքերում, վորտեղ պահպանվում են ախտա-
հանիչ բուժանյութերը, կտրականապես արգելվում ե
պահել հացահատիկ, ալյուր, կրուպա ու ուրիշ սնն-
դանյութեր և անասնակեր (խոտ, դարման և այլն)
կամ վորեւ ուրիշ առարկաներ, վորոնք ախտահանիչ-
ների հետ վոչ մի կապ չունեն:

3. Թույների— ախտահանիչների պահպանումը,
նրանց ընդունումն ու բաց թողումը կատարվում ե
ստուգված հատուկ մարդու— պահեստապետի կողմից:

Այդ շենքերի մուտքը կողմնակի մարդկանց առանց
պահեստապետի արգելվում ե:

4. Ախտահանիչ թույները պետք ե պահել ամուր և
լավ փակված ամաններով:

5. Թույնի յուրաքանչյուր տեղի (արկղի, տակառի
և այլն) վրա պետք ե կպցնել ետիկետ, ցույց տալով
թույնի անունը, թույնի ազգող մասի տոկոսը, թույնի
կշեռը և պահեստում մուտք անելու ժամանակը:

6. Թույների պահեստում պետք ե պահել առանձին
կշեռք, չոմչաներ (սովոր), կշռաքարեր, խալաթներ,
ուսողիրատորներ, պաշտպանող ակնոցներ, լվացարան,
սրբիչ և ոճառ: Թույների կշռումը կատարում ե պա-
հեստապետը, վորն աշխատանքից առաջ պետք ե հագ-
նի խալաթը, ակնոցները և ուսողիրատորը:

Պահեստում ուտելի և ծիելն արգելվում ե: Աշ-
խատանքի վերջում պետք ե անպայման ոճառով և ջրով
լվանալ ձեռքերն ու յերեսը:

8. Ախտահանիչ թույները պահեստից բաց են թող-
նում ստացականով կոլտնտեսության նախագահի, կամ
նրա տեղակալի գրավոր կարգադրության համաձայն,
ախտահանումը դեկտավարող պատասխանատու անձին
ցույց տալով թույնի ճիշտ անունը, նրա քանակը և թե-
ի՞նչ նպատակի համար ե բաց թողնվում:

9. Ախտահանիչ թույները բաց են թողնվում հա-
տուկ անոթներում, վորոնք թույնն ոգտագործելուց

Հետո պետք է վերադարձվեն պահեստ։ Արգելվում է թույնի անոթները զործածել ջուր, սննդամթերքներ և անասնակեր լցնելու համար։

Ճշգրիտ կերպով պետք է հաշվի առնել ախտահանիչ թույների մուտքն ու յելքը պահեստում։ Դրա համար կոլտնտեսության պահեստում պետք է պահել թույների հաշվառման յելքի ու մուտքի մատյան համարակալված ու կարված թերթերով, վորում պետք է գրանցել ստացված և բաց թողնված թույների քանակը։

10. Բոլոր ախտահանիչ թույները պետք է փոխադրել ամուր և լավ փակված ամաններով։

11. Արգելվում է փոխադրել մեկ սայլի մեջ ախտահանիչ թույները սննդամթերքների և անասնակերի հետ միասին։

12. Չոր ախտահանիչների բարձման և դատարկման ժամանակ բանվորները պետք է հագնեն ուսողիքատորներ կամ բերանը և քիթը ծածկեն թաց շորով։

13. Այն վագոնները, ավտոները կուզովները և սայլերը, վարոնց մեջ չոր ախտահանիչներ են փոխադրվել, անպայման պետք է խնամքով լվանալ ջրով։

ԱԽՏԱՀԱՆՎԱԾԾԱՌ ՀԱՅԱՀԱՆՎԻԿԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ԲԱՑ ԹՈՂՈՒՄԸ ՅԵՎ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

1. Սերմացուն ցանքի համար նախապատրաստելու ժամանակ կտրականապես արգելվում է ցանքի համար պահանջվող քանակից ավելի սերմացուն ախտահանելը։

2. Ախտահանված սերմացուն պետք է պարկերով կամ ծայրահեղ դեպքում կույտերով պահել փակի տակ գտնվող առանձին պահեստներում պահեստապետի պատասխանատվությամբ։ Այդ պահեստներում արգելվում է պահել սննդամթերքներ կամ վորեւե այլ իրեր։ Այդ պահեստներում պետք է պահել առանձին կշեռքներ և կըսաքարեր։

3. Առանց պահեստապետի, այդ պահեստների մուտքը, վորտեղ պահվում է ախտահանված սերմացուն, կողմնակի մարդկանց համար արգելվում է։

4. Ախտահանված սերմացությով լցված պարկերէ վրա պետք է պարզ կերպով գրել՝ «Ախտահանված ե», «Քույն ե», «Վտանգավոր ե»։

5. Ախտահանման աշխատանքների ընդմիջման ժամանակ, ինչպես նաև ախտահանված սերմացուների ցանելու ժամանակ, յեթե սերմացուն փակ շենքում չկդադար ամառակալված, անհրաժեշտ է սերմացուն լավ ծածկել բրեցնուով և վրան պահակ կանգնեցնել։

6. Ախտահանված սերմացուն ցանելու համար բաց է թողնվում միմիայն ղեկավար կազմակերպությունների (կոլտնտվարչության նախագահի, սովխողի դիրեկտորի կամ նրանց փոխարինող անձնավորությունների) գրավող կարգադրության համաձայն։ Կարգադրության մեջ պետք է պարզ կերպով ցույց տալ պահանջվող սերմացույի քանակը։

Սերմացույի բաց թողումը պահեստից ձեւակերպում է կարգադրի-փաստաթղթով։

7. Ախտահանված սերմացույի փոխադրումն ուրիշ մթերքների կամ ախտահանման աշխատանքների հետ կապ չունեցող առարկաների հետ արգելվում է։

Ախտահանված սերմացուն կույտերով, առանց պարկերի աղելվում է փոխադրել։

Պարկերի պակասության դեպքում, վորպես բացառություն թույլատրվում է ախտահանված սերմացուն փոխադրել բեստարկաների (հատուկ արկղների) մեջ, սակայն, վորպեսզի թույնի փոշիացում տեղի չունենա, բեստարկայի բերանը պետք է փակել ջրով թացացրած բրեկենտով, կտորով կամ թե տախտակով։

8. Ախտահանված սերմացուն փոխադրող բանվորներին պետք է նախորոք ծանոթացնել նրա հետ վերաբերվելու կանոնների հետ։

9. Ցանքսից հետո, հաղվագյուտ դեպքերում մնացած ախտահանված սերմացուն կտրականապես արգելված պետք է պահանձին պահել սննդամթերքների հետ։

վում և ողտագործել վորպես սնունդ մարդկանց համար, ինչպես նաև վորպես անասնակեր կամ կուտթոչունների համար:

Ախտահանված սերմացույի վերամշակումը (լվանալը, քամհարելը և այլն) նրան հետագայում վորպես սննդամթերք, անասնակեր կամ կուտթոչուններու համար նույնպես կտրականապես արգելվում է:

Յուրաքանչյուր դեպքում, յերբ հակառակ առաջին կետի ախտահանված սերմացուն ավելանում է, պետք է անպայման քննության առնել պատճառները և կոնկրետ մեղավորներին ամենախիստ պատասխանատվության յենթարկել:

Յանքսից հետո մնացած ախտահանված սերմացուն կարելի յետալ ուրիշ սովորվածներին կամ կուտթունտեսություններին, յեթե նրանց սերմացուն պակասում է, ձևակերպելով այդ համապատասխան ակտով:

Յեթե ախտահանված սերմացուն հնարավոր չետալ ուրիշ կուտթունտեսություններին կամ սովորվածներին, այդ դեպքում կարելի յեն նրանց ցանել կանաչ կեր կամ խոտ ստանալու նպատակով:

Յեթե ԱԲ-ով ախտահանված սերմացուն ցանելու համար ազատ հող չլինելու պատճառով ավելանում է, այդ դեպքում այդ սերմացուն պարկերով պահում են կնքված շենքերում մինչև մյուս տարի: Այդ սերմացուն ցանելուց առաջ պետք է նախորոք ստուգել՝ նրա ծլունությունը վարոշելու համար և ստուգման արդյունքների համաձայն սահմանել սերմացույի ցանքսի նորման:

10. Ախտահանված սերմացուն կտրականապես արգելվում է հանձնել Զագոտղեռնոյին կամ խառնել չախտահանված հացահատիկների հետ:

11. Ախտահանված վող սերմացուն պահեստից ցանելու համար բաց թողնելուց հետո պահեստը է խնամքով մաքրել: Գետնին թափված առանձին հատիկները պետք է հավաքել և այրել: Այնուհետև պահեստը պետք է լվանալ ջրով, վորից հառ պատերը սպիտակացնել կրով:

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ, ՊԱՐԿԵՐԻ ՅԵՎ ՊԱՀԵՍՏԱՆԵՐԻ ՆԱԽԱ-
ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՆՈՐ ԲԵՐՔՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Առողջ սերմացուն մրիկով վարակվելու աղբյուրներից մեկն ել հանդիսանում են այն սպորները, վորոնք անցյալ տարիներից մնացել են պահեստներում, բերքահավաքի և սերմագոտիչ մեքենաների վրա և պարկերում (տարա): Դրա համար բերքահավաքից առաջ դրանց պետք է խնամքով մաքրել և ախտահանել:

2. Պարկերը, ջվաղները և այլն լվացվում են ֆորմալինի լուծույթով (տես ֆորմալինով թաց ախտահանման ձևը):

3. Գյուղատնտեսական գործիքները վերանորոգումից հետո, ինչպես նաև հետագա աշխատանքի ընդմիջումների ժամանակ պետք է մաքրել փոշու մնացորդներից, վորոնք անկասկած պարունակում են սպորներ, լվանալ ջրով սրսկիչ մեքենաների կամ պոմպի (նասոսի) ոգնությամբ: Դրանից հետո պետք է թրջել 40% ֆորմալինի 1:100-ի կամ 30 տոկոսանոց ֆորմալինի 1:225-ի հարաբերությամբ պատրաստված լուծույթով, հետո ծածկել ֆորմալինի լուծույթով թրջված բբեզնառով և թողնել այդպես գիշերը:

4. Բերքահավաքից առաջ բոլոր պահեստները պետք է խնամքով մաքրել և պոմպի (նասոսի) կամ սրսկիչ մեքենայի ոգնությամբ լվանալ ներսի կողմից 3-րդ կետում նշված հարաբերությամբ պատրաստված ֆորմալինի լուծույթով: Յերկրորդ որը պետք է սպիտակացնել կավիճով կամ նավթակրային եմուլսիայով: Դրաներն ու պատուհանները բաց արած ողափոխելուց հետո պահեստները պետք է փակել մինչև նոր բերքը ընդունելը:

ՍԵՐՄԱՑՈՒ ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱԲԻ, ԿԱԼՍՄԱՆ
ՅԵՎ ՊԱՀԵՍՏՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Վորովհետեւ տեսակավոր սերմացուն, ինչպես գոսսորտֆոնտի, նույնպես և Զագոտղեռնոյի զծով

ընդունվում և պահպանվում են պահեստներում՝ մրիկով նրանց վարակված լինելու աստիճանի համեմատ, ինչպես և կոլտնտեսությունների պարենային հացահատիկի վորակը լավացնելու համար անհրաժեշտ է նրանց բերքահավաքը, դեղավորումը, կալումն ու պահպանումը պահեստներում կատարել այնպես, վորպեսզի մրիկով տարբեր վարակվածություն ունեցող հողամասերի բերքն իրար հետ չխառնվի:

Դրա համար անհրաժեշտ է տարբերել վարակվածության հետեւյալ խմբավորումները՝

ա) Ցորենի և գարու համար ըստ փոշեմրիկով վարակվածության պետք ե առանձնացնել հետեւյալ խմբերը՝ առողջ ցանքսեր, մինչև $0,5^{\circ}/_0$ վարակվածություն ունեցող ցանքսեր, $0,5-ից$ մինչև $2^{\circ}/_0$ վարակվածություն ունեցող ցանքսեր և $2^{\circ}/_0-ից$ բարձր վարակվածություն ունեցող ցանքսեր։ Իսկ յեթե միաժամանակ վարակված են քարամրիկով և փոշեմրիկով, այդ դեպքում՝ ցորենի, գարու և հաճարի ցանքերից պետք ե առանձնացնել— ա) առողջ ցանքսեր, բ) մինչև $2^{\circ}/_0$ վարակվածություն և գ) $2^{\circ}/_0-ից$ բարձր վարակվածություն ունեցող ցանքսեր։

բ) Վարսակի համար առանձնացվում են հետեւյալ խմբեր՝ առողջ ցանքսեր, մինչև $2^{\circ}/_0$ վարակված ցանքսեր և $2^{\circ}/_0-ից$ բարձր վարակված ցանքսեր։

գ) Տարեկանի համար առանձնացվում են հետեւյալ խմբեր՝ առողջ ցանքսեր, մինչև $0,5^{\circ}/_0$ վարակվածություն ունեցող ցանքսեր և $0,5^{\circ}/_0-ից$ բարձր վարակվածություն ունեցող ցանքսեր։

դ) Կորեկի համար առանձնացվում են հետեւյալ խմբեր՝ առողջ ցանքսեր, մինչև $2^{\circ}/_0$ աստիճան վարակվածություն ունեցող ցանքսեր և $2^{\circ}/_0-ից$ բարձր վարակվածություն ունեցող ցանքսեր։

2. Սերմաղաշտերից հավաքված հացահատիկը պետք ե պահել այդ նպատակի համար առանձնացված հատուկ պահեստներում։

3. Կտրականապես արգելվում ե խառնել մեկ տե-

սակը մյուս տեսակի հետ, մեկ կատեգորիայի սերմաղում մյուսի հետ, մեկ ուղղողուկցիան մյուս ուղղուկուկցիայի հետ, մեկ դասի սերմացուն մյուսի հետ, նաև փոշեմրիկով վարակված կամ քարամրիկի պարեր ունեցող ցանքաղաշտերից հավաքված սերմաղուն առողջ սերմացույի հետ։ Այն անձնավորությունները, վորոնք թույլ կտան նման խառնուրդներ, կենթարկվեն դատական պատասխանատվորության և կպատժվեն քրեյական կարգով՝ կալանքի տակ առնվելով մինչև 2 տարի ժամանակով կամ հարկադիր աշխատանքի մինչև 3 տարի ժամանակով։ (ԽՍՀՄ-ի Ժողկոմիությունի «Հացահատիկային կուտարաների սերմացույի լավացման միջոցառումների մասին» 1937 թվի Հունիսի 29-ի վորոշումից)։

ՅԱՆՔՍԵՐԻ ՄՐԻԿՈՎ ՎԱՐԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Յանքսերի մրիկներով ուժեղ վարակվածության բոլոր դեպքերը, ինչպես նաև անցյալ տարվա նկատմամբ վարակվածության չափի ամելացման յուրաքանչյուր դեպք պետք ե քննության յենթարկվի Հողբանի կամ ՄՏԿայանի կողմից կազմակերպված հատուկ հանձնաժողովի կողմից հողբաժնի վարիչի նախագահությամբ, վորին գյուղատնտեսից բացի, մասնակից են արվում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Կատարված քննության արդյունքում պարզվի, վոր ցանքի բարձր աստիճանի վարակվածությունը տեղի յեւնեցել մրիկների դեմառաշարկվող ճենարկումների չկատարման հետևանքով, այդ դեպքում հանցավորները համաձայն գոյություն ունեցող որենքների, յենթարկվում են պատասխանատվորության

Խմբագիր՝ Գ. Մարշանյան
Լեզլ. խմբագիր՝ Ս. Միքայելյան
Տէի. խմբագիր՝ Լ. Ռիանյան
Սրբագրիչ՝ Վ. Ավագյան

Գլամութեալ լիազոր՝ Ղ— 3608. Հբառ. № 4598
Պատկեր 406 Տիրաժ 3000
Թուղթ 62×74. Տպադր. 3 $\frac{1}{4}$ մամ.
Մեկ մամ. 24,480 նշան. Հեղինակ. 1,91 մամ.
Հանձնված և արտադրության 22 ապրիլի 1938 թ.
Ստորագրված և տպագրության համար 15 մայիսի 1938 թ.
Գետհրատի 1 տպարան, Յեղեան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0280574

278

17726

Издательство
по борьбе с головной
зарубежной культурой
Гос. Арх. ССР. Ереван, 1962